




ԾՅԵՑՅԵՑԻՆ ԽԶԲԿՅՈՂ  
ՀԱՄԱՄԻԱԼԻԹԻՆԱՅԻՆ  
ԿԵՄԵՎՈՐ ԲՆԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԻ  
(ԵՎԿԵ)

ԵՐԵՎԱՆ - 1949



ՀԱՅՈՒՆ ՄԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

358.4

Ա - 80

Ամսագիր է 1961 թ.

ԱԼԻՍՅԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՂ  
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ  
ԿԱՄԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
(ԱԱԿԸ)

15.362



ԵՐԵՎԱՆ - 1961

A —  
1800

Всесоюзное  
добровольное общество содействия  
авиации  
(ДОСАВ)  
(На армянском языке)  
Ереван 1949 г.

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՎԹԱՑԻՌ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ Է

Սովետական Սոցիալիստական Ռեսպոբլիկաների Միությունը՝ մեծ, հզոր ավիացիոն տերություն է:

ՍՍՌՄ Օդային Նավատորմը սիրով աճեցվել է բոլշևիկների պարտիայի, մեծ առաջնորդներ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կողմից: Նա շրջապատված է համաժողովրդական հոգատարությամբ, նա աճում, զարգանում և ամրանում է Լենինի-Ստալինի սլաքտիայի ղեկավարությամբ:

Սովետական պետության գոյության առաջին խոկորերից Վ. Ի. Լենինն ու Ի. Վ. Ստալինը հսկայական նըշանակություն էին վերագրում ավիացիային և ղեկավարում էին օդային այն ջոկատների ու խմբերի ձևավորումը, որոնք ակտիվ մասնակցեցին սպիտակ բանակների և ինտերվենտների դեմ մղված մարտերում: Լենինն ու Ստալինն աճեցնում էին օդաչուների այն առաջին կադրերն, որոնք անձնվիրաբար ու արիությամբ պաշտպանեցին երիտասարդ Սովետական ռեսպոբլիկան:

Ի ժառանգություն հին ցարական միուսաստանից Սովետական պետությունն ստացել էր բոլորովին աղքատ և այն էլ քայլայված ավիացիոն տնտեսություն: Քաղաքացիական կռմի ու փլուզման ծանր պայմաններում

բոլշևիկների պարտիան ձեռնամուխ եղավ սովետական ավիացիայի շինարարությանը:

Լենինն ու Ստալինը հանճարեղ կանխատեսությամբ նախորդշեցին ավիացիայի մեծ ապագան ու այն հակա- յական դիրն, որ նա պետք է խաղար մեր Հայրենիքի ճակատագրերում և անջրաժեշտ պայմաններ էին ըս- տեղծում ավիացիոն գիտության և ավիացիոն արդյու- նաբերության ամենաարագ զարգացման համար:

Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ գիտնականների մի խոսքը, պրոֆեսոր Ն. Ե. Ժուկովսկու գլխավորու- թյամբ, մեծ և բնեղմնավոր դիտական տշխատանք ծավա- լեց, Լենինի անմիջական ցուցումներով հիմնադրվեցին մեր երկրում առաջին գիտական հիմնարկները՝ ԿԱՀԻ-ն<sup>\*</sup>) և ինժեներային ինստիտուտն, որը հետո վեր- ածվեց Ռազմա-օդային ակադեմիայի:

Ստալինյան առաջին հնդամյակի տարիներին, բոլ- շևիլյան պարտիայի ղեկավարությամբ, մեր երկրում ստեղծվեց սոցիալիստական առաջնակարգ ինդու- ստրիան՝ Հզոր մեքենաշինությունը և մոտորաշինությու- նըն, ավելացավ ածխի հանույթը, մետաղի արտադրու- թյունը, ծավալվեց հայրենական պաշտպանական ար- դյունաբերությունը: Արդյունաբերության նոր ճյուղերի նախաձեռնողն ու ոգեշնչողը, սոցիալիստական կառու- ցումների կազմակերպիչն ու ղեկավարը Մեծ Ստալինն էր:

Արդեն ստալինյան առաջին հնդամյակում ավիա- ցիայի զարգացման համար ստեղծվեց կայուն նյութա- կան բաղաւ: Ստեղծվեցին ավիացիոն նոր գործարաններ,

\* ) Կհնաբերունական ակրոհիգրոգինամիկական ինստիտուտ (թարգմ.)

նոր լաբորատորիաներ և հետազոտական ինստիտուտ -ներ: Լենինի-Ստալինի պարուիան սովետական ժողովրդի շանքերն ուղղում էր դեպի Օդային նավատորմի հետազա տճումն ու կատարելագործումը: Սովետական սոցիալիստական կարգը՝ հայրենական ավիացիայի առաջ, նրա զարգացման համար լայն հեռանկարներ բացեց: Խորուստրացման ստալինյան պլանը ՍՍՌՄ Օդային նավատորմի շինարարության համար հղոր նյութական քաղաքի ստեղծումն էր նախատեսնում: Բնել. Ստալինը 1933 թ. հունվարին հանրագումարի բերելով առաջին հնդամյա պլանի կենսագործման արդյունքներն, ասաց. «Մենք շունչինք ավիացիոն արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն»: Երկրորդ հնդամյակի տարիների ընթացքում ավիացիոն արդյունաբերության արտադրանքի ծավալն, առաջին հնդամյակի համեմատությամբ, ավելացավ հինգ և կես անգամ: 1934-ից մինչև 1939 թ. 7 միլիոն 900 հազար ձիու ուժով աճեց Սովետական Օդային նավատորմի ավիամոտորների հղորությունը:

Ա. Ն. Տուպոլևի կոնստրուկցիայի առաջին սովետական բազմամուտոր ինքնաթիռի հետևից, որն ստացավ «Կրիլյա Սովետով» («ԱՆՏ-9») անունը, ծավալվեց բազմաթիվ առաջնակարդ ծանր մեքենաների շինարարություն: Տուպոլևան ՏԲ-3 ինքնաթիռները (ծանր քառամուտոր ոմբակոծիչներ) մեր ավիացիայի պատմության մեջ մի ամբողջ ժամանակաշրջան կազմեցին: 1935 թ. ամռանը ՏԲ-3 ինքնաթիռների վրա՝ Մոսկվա-Վաշինգտոն-Չոռմ մարզրուսով կատարված խըմբային թոփշքը մի անգամ ևս ցուցադրեց սովետական

ինքնաթիռների գերազանցությունն՝ օտարերկրյա ինք-  
նաթիռների նկատմամբ:

Միաժամանակ զարդանում և կատարելագործվում  
էր թեթև ինքնաթիռների շինարարությունը։ Սովետա-  
կան երկնքում երևացին նոր, հիանալի սրբնթաց կոր-  
ծանիչներ, սպորտային և վարժական թեթև մեջքնաներ։  
Ոչ պակաս բեղմնավոր կերպով էին աշխատում մո-  
տորների և ամիացիոն սպառազինության սովետական  
կոնսարումտորները։

Ամիացիոն տեխնիկայի լայնորեն զարդացումն ու-  
ղեկցվում է Թուշքա-տեխնիկական կադրերի շտեսնված  
աճով։

Ինչպես հոգատար Հայր և ուառցիչ, ընկեր  
Ստալինը հզոր օդային նավատրոմի համար աճեցնում  
ու դաստիարակում է կադրեր՝ տաղանդավոր կոնստրուկ-  
տորների, իսկական բազե-օդաչուների՝ ամիացիոն գործի  
ապագա վարողետների անվեհեր երիտասարդ ցեղը։

Ընկեր Ստալինը փայլուն բնութագիր է տվիլ սովե-  
տական օդաչունին։

«Օդաշուն, — ասել է ընկեր Ստալինը դիմելով Զկա-  
լովին և նրա նախակազմին, — դա համարենարանաց-  
ված կամք է, բնավորություն, ոիսկի գնալու կարողո-  
թյուն։

Բայց խիզախությունը և անվեհերությունը՝ դա հե-  
րոսության միայն մի կողմն է։ Մյուս կողմը, ոչ պակաս  
կարևորը, դա հմտությունն է։ Եփզախությունը, պառա-  
հն, քաղաքներ է նվաճում։ Բայց այդ միայն այն դեպ-  
քում, եթե խիզախությունը, անվեհերությունը, ոիսկի  
գնալու պատրաստակամությունը՝ զուգակցվում են գե-  
րազանց զիտելիքներով»։

Այդպիսի ստալինյան օդաշուր, որը խիզախությունն ու անվեհերությունը զուգակցում է հմտության հետ, եղել է Զկալովն, որի կերպարը միշտ ծառայել ու ծառայում է, որպես ոգեշնչող օրինակ սովորական օդաշուների համար:

Սովորական կոնստրուկտորները, սովորական օդաշուները, սովորական ավիացիոն արդյունաբերությունը՝ պատվով կատարեցին ընկ. Ստալինի կողմից սովորական ժողովրդի առաջ դրված խնդիրը. «Թոշել ամենից հեռու, ամենից արագ, ամենից բարձր»:

Ստալինյան ցուցումներին համատարիմ, ստալինյան ռազմական գիտությանը տիրապետած, սովորական օդաշուները մյուս զորատեսակների փոխգործողությամբ, ջախջախիլ հակահարված հասցրին ճապոնական և սովորակ-ֆիննական ազրեսորներին: Խասան լճի, Խալխին-Գոլի, Կարելական պարանոցի վրայի օդամին ժարտերում ստալինյան բազեները ցուց տվեցին իրենց ժարտական վարպետությունը, ցուցադրեցին բոլոր կողմերից սովորական ռազմա-օդային ուժերի դերագանցությունը, թշնամու ավիացիայի հանդիպ:

Ծնորչիվ ընկեր Ստալինի հոգատարությանը՝ սովորական ավիացիոն գիտության, արդյունաբերության զարգացման, կաղըերի դաստիարակման մասին, մեր օդային նավատարմն աճել է հզոր ուժի: Նախապատերազմյան ստալինյան հնգամյակների ատրիններին, Էնինի-Ստալինի պարտիայի կողմից զեկավարված և ոգեշնչվող սովորական ժողովուրդը, մեր Հայրենիքը վեր ածեց մեծ ավիացիոն տերության: Ստալինյան ավիացիայի հզորությունն ամենից ավելի լրիվ կերպով ար-

տահայտվեց Հայրենական Մեծ պատերազմի տարիներին:

Գերմանացիներն, ինչպես հայտնի է, պատերազմում մնալու գործը էին հատկացնում ավագիային և տանկերին: Հիտլերյան Գերմանիայի՝ Սովետական Միության վրա ուխտադրուժ կերպով հարձակվելու պահին, Եվրոպայի հարյուր ինքնաթիւուշինարարական և քառասուն մոտորաշինարարական դործարաններ աշխատում էին հոգուտ Գերմանիայի ռազմա-օդային ուժերի: Թշնամին քանակական գերազանցություն ուներ և լիտի ինքնավտաճությամբ փողճարում էր իր շուտափույթ հաղթանակի մասին: Մեր Հայրենիքի երկնքում ծավալվեցին պատերազմների պատմության մեջ զեռևս շտեսնված օդային ճակատամարտեր:

Մինչև վերջ իրենց Հայրենիքին, բոլշևիկյան պարտիային, Մեծ Ստալինին և հարազատ սովետական կառավարությանը նվիրված խիղախ սովետական սավառնորդները, ցամաքային զորքերի հետ սերտ փոխգործողությամբ, իրականացնելով ակտիվ պաշտպանության ստալինյան հանճարեղ պլանն, արդեն պատերազմի հենց առաջին խակ էտապում, թշնամու օդային ուժերին անլրացնելի կորուստներ հասցրին: Օդային կատաղի մարտերում մեր քաջարի օդաչուները ցուցադրեցին ոչ միայն սովետական տեխնիկայի գերազանցությունն, այլ և իրենց բարոյական գերազանցությունը: Սովետական մարդկանց բարձր բարոյական հատկությունները կոփիվել և դաստիարակվել են լենինի-Ստալինի մեծ պարտիայի կողմից:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին էլ ավելի ամրապնդվեց ՍՍՌՄ ժողովուրդների ստալինյան

բարեկամությունը։ Սովետական Միության ժողովուրդ-ները, ուստի մեծ ժողովրդի գլխավորությամբ, ձեռք-ձեռքի տված, պայքարում էին՝ հանուն ընդհանուր գործի, հանուն հարազատ երկրի, հանուն սովետական Հոլոկոստի պատճենի ու ազատության։

Մեր երկրի ժողովուրդների բարոյա-քաղաքական միասնությունը և բարեկամությունը, կենտրար սովետական հայրենասիրությունն ու թշնամու նկատմամբ ունեցած ատելությունն, իրենց պայծառ արտահայտությունը գտան մասսայական հերոսության մեջ, զինվորների և նախաստիների, սերժանտների ու ավագների, սպաների, գեներալների ու ազմիրալների սխրագործությունների մեջ։

Պատերազմի առաջին իսկ օրերն արգեն ցույց տվին թե ինչպիսի՞ սխրագործությունների է ընդունակ՝ Հայրենիքի առաջ իր պարտին և իր զինվորական երրմանը հավատարիմ սովետական մարդը։

1941 թ. հունիսի 5-ին ամբողջ սովետական երկիրը Սովետական Խնֆորմբյուրոյի հաղորդագրությունից իմացավ, էսկադրիլայի հրամանատար՝ կազիտան Նիկոլայ Գաստելլոյի անմահ սխրագործության մասին։ Թշնամու զենիթային թնդանոթի արկը կպել էր նրա ինքնաթիռի բենդինի բաքին։ Անվեհեր սովետական սպանոցով բռնված մեքենան ուղղեց զեզի գերմանական ավտոմեքենաների և ցիստերների ամենախիտ ռենդը։ Վիթխարի ուժի պայթյունն, որում կործանվեց հերոսի ինքնաթիռն, ոչնչացրեց մեծ քանակությամբ թշնամական մեքենաներ և ցիստերներ։ Ն. Գաստելլոյին հետ մահվան Սովետական Միության Հերոսի կոչում շնորհվեց։

Նիկոլայ Գաստելլոն ցույց տվեց, որ սովետական

մարդիկ արհամարում են վախը մահվան հանդեպ և պատրաստ են զոհաբերելու իրենց կյանքը հանուն հաղթանակի Գաստելլոյի սիրագործության մեջ, իրենց ամբողջ գեղեցկությամբ, բացվեցին սովորական մարդու չերմ սիրելի իր մայր-Հայրենիքի բոցավառ հայրենասերի, բարոյական նկարագրի ամենալուսավոր գծերը:

Երբեք չեն մոռացվի մեր ժողովրդի հիշողությունից Սովորական Միության Հերոսներ, օդաշումներ՝ Վիկտոր Տալալիխինի, Թիմուր Ֆրունզեի, Բորիս Ամֆոնովի և ուրիշ շատերի անմահ անուններն, որոնց օրինակն օդենչներ և հաղթանակի է կոչել մեր օդագնացներին:

«Մեր ավիացիան,—ասում էր ընկ. Ստալինը 1941 թվի նոյեմբերին,—որակով գերազանցում է գերմանական ավիացիայից, իսկ մեր պանծալի օդաշումներն իրենց պատճեն են անվիճեր մարտելիների փառքով»:

Մոսկվայի համար մղվող մարտերում ստալինյան բազեները հուսալի կերպով պատսպարեցին վերմայրաքաղաքային երկինքը և մայրաքաղաքը փրկեցին բարբարոսական կործանումից: 1941 թվին Մոսկվայի տակ տեղի ունեցած մարտերում սովորական օդաշումները ցրեցին հիտլերյան ավիացիայի «անսպասելիության» առասպելը: Ստալինդրադի ճակատամարտի վճռական ամիսներին սովորական օդագնացները վոլգայի վրա ոչնչացրին գերմանական հազար ինքնաթիւ: Մարտի մեջ մտան կոնստրուկտորներ Ս. Վ. Իլյուշինի,, Ս. Ա. Լավոլիխինի, Ա. Ա. Յակովլիկի սովորական առաջնակարգ մեքենաները:

Պատերազմի ընթացքում հայրենական ավիացիան, հենվելով հղոր թիկունքի վրա, թշնամու նկատմամբ ըստացավ նաև թվական գերազանցություն: Ընկեր

Ստալինը խորամուս էր լինում ավիացիայի կյանքի ու  
մարտական գործողությունների բոլոր կողմերը։ Նա  
մշտապես հոդ էր տանում Ռազմա-օդային ուժերի մա-  
սին, նրանց առաջնակարգ տեխնիկայով սպառազինելու  
մասին։ Բնկեր Ստալինն անձամբ էր գնում ավիացիոն  
կոնստրուկտորների առաջ՝ նրանց խնդիրները, հետևում  
ավիացիոն գործարանների աշխատանքին։ Արդեն 1943  
թվի դարնանը և աշնանը սովետական օդաշուներն ամ-  
րացրին իրենց անբաժանելի տիրապետությունն օդում։  
Մկսվեց Սովետական Բանակի հերոսական հարձակու-  
մը թշնամուն սովետական երկրից լիովին վռնդելու հա-  
մար և ապա նաև ֆաշիստական որդի գրոհումը։ Օր-օրի  
վրա, Ստալինդրադից մինչև Բեռլին, ավելի ու ավելի ու-  
ժեղանում, ավելի ու ավելի խորատակից էին դառնում սո-  
վետական ավիացիայի հարվածները։

Կործանից և գրոհային ավիացիայի հետ միասին,  
հաղթանակի գործում մեծ մուծանք ներդրեց նաև մեր  
մերձավոր ու հեռավոր ոմբակոծից ավիացիան։ Նա օդից  
հարձակվում էր երկաթուղային խոշոր հանգույցների,  
թշնամու կոմունիկացիաների, օդանավակայանների,  
նավահանգիստների, պահեստների, արդյունաբերական  
կենտրոնների վրա, ոմբակոծում էր զորքերի կուտակում-  
ները՝ թշնամու թիկունքում։

Սովետական հեռավոր ավիացիան, որպես ավիա-  
ցիայի ինքնուրուց տեսակ, ստեղծվել է անձամբ ընկեր  
Ստալինի ցուցումով։

Մեծ են ծովային ավիացիայի ծառայություններն,  
որը նավատօրմի և Բանակի հետ համագործակցած հա-  
շողությամբ իրականացրեց իր խնդիրները։ Սովային ա-

Ավագիայի ստալինյան բազեները փառավոր քիչ էշիր շգրիցին Օդեսայի, Սևաստոպոլի, Լենինգրադի, Սովետական Անդրբևեռի հերոսական պաշտպանության պատմության մեջ:

Պատերազմական վերջին 3 տարվա ընթացքում սովետական ավիացիոն գործարանները ռազմաճակատին տարեկան մինչև 40 հազար ինքնաթիռ էին տակիւ: Կենիգսբերգի գրոհման ժամանակ 2 օրվա ընթացքում սովետական ավիացիան գործեց ավելի քան 10 հազար ինքնաթիռա—արտաթիշք և թափեց թշնամու վրա հինգ միլիոն կիլոգրամ ռումբ: Յեռլինի համար մղվող ճակատամարտին մասնակցեցին 8400 սովետական ինքնաթիռներ: Պատերազմի 4 տարվա ընթացքում սովետական օդաչուները, միայն օդային մարտերում, ցած գցեցին և վառեցին 75.000 թշնամական ինքնաթիռներ: Այդ նույն ժումանակամիջոցում՝ ՍՍՌՄ Օդային նավատորմը կատարեց մոտ երեք միլիոն մարտական թրուիչքներ Հայրենական Մեծ Պատերազմի վերջին ՍՍՌՄ Զինված Ռւժերի ավիացիան պատերազմի սկզբի համեմատությամբ աճեց հինգ անգամ: Բավական է բերել միայն այդ թվերն, որպեսզի կարելի լինի պատկերացնել ստալինյան ավիացիայի հզորությունը Հայրենական Մեծ պատերազմում և այն դերն, որ նա խաղաց երկրորդ համաշխարհային պատերազմի աժքողջ ընթացքում:

Պետք է նկատի ունենալ, որ սովետական ավիացիայի դեմ ելել էր հիտլերյան Գերմանիայի և նրա դաշնակիցների ամրող ավիացիայի հիմնական և ճնշող մասը: Անգլո-ամերիկայան օդային ուժերին հիտլերյան ավիացիան գրեթե չէր դիմադրում: Պետք է նույնպես և

նկատի ունենալ, որ անգլո-ամերիկյան ավիացիայի սրոշ ակտիվությունը երեան եկավ միայն այն ժամանակ, երբ Սովետական Բանակի հարձակողական դործովությունները գերմանական բանակին խոշորագույն պարագայության հասցրին, և գերմանա-ֆաշիստական նվաճողների գեմ մղվազ պայքարի պատերազմական դրության մեջ արմատական փոփոխություններ եղան՝ հոգուտ Սովետական Բանակի։ Մինչև այդ ժամանակ Ռումինիան, Ֆրիզլանդիան և Բուլղարիան զենքերը ցած դրին, Հունարիան զտնվում էր կապիտուլացիայի նախօրյակին։ Սովետական Միությունը կարող էր առանց դաշնակիցների օգնության, իր սեփական ուժերով, օկուպացնել ամբողջ Գերմանիան և իրականացնել Ֆրանսիայի աղատապրումը։

Անգլո-ամերիկյան ավիացիայի ուշացած հարվածները տեղացին արևելյան Գերմանիայի միայն այն օրեկտների վրա, որոնց ոչնչացմամբ շահագրգություն էին ամերիկյան արդյունաբերողներն ու բանկիրները։

Այս փաստերը մերկացնում են պատմության բուրժուական կեղծարարներին, որոնք փորձում են Գերմանիայի շախշախաման մեջ մեծ ծառայություններ վերագրել անգլո-ամերիկյան ավիացիային։ Փաստերը ցույց են տալիս, որ հիտլերյան ռազմա-օդային ուժերի շախշախաման մեջ վճռական գերը պատկանում է Սովետական Միության ավիացիային։ Մեր Ռազմա-օդային ուժերը նոր հաջողությունների հասան ճապոնական ազրեսորի դեմ մղած պատերազմում և նպաստեցին Հեռավոր Արևելյում վճռական հաղթանակ նվաճելուն։

Հայրենական Մեծ պատերազմում մեր Զինված Ռւժերի պատմական հաղթանակներն անժիստելի ապա-

ցուց են հանդիսանում՝ իր դարն ապրած կապիտալիստական կարգի հանդեպ՝ սովորական սոցիալիստական կարգի ունեցած առավելությանը։ Հիտերյան Գերմանիայի և իմպերիալիստական ճապոնիայի դեմ համաշխարհային պատմական հաղթանակն, որ տարավ մեր ժողովուրդը, — ուստի սովորական հասարակական և պետական կարգի հաղթանակն է։

Իրենց բոլոր հաղթանակներով մեր Բանակը, Նավատորմն, Ավիացիան պարտական են բոլշևիկյան պարտիացին և հանճարեղ զորավար Մեծ Ստալինին, որը նախապատրաստեց մեր երկիրը պաշտպանության, մըշակեց և իրականացրեց թշնամուն ջախջախելու ծրագիրը, ժողովրդի և բանակի բոլոր ջանքերն ուղղեց հանուն հաղթանակի նվաճմանը։

Ստալինյան ավիացիան հերոսական քիչ էշեր չգրեց Հայրենական Մեծ պատերազմի պատմության մեջ։

«Յաշխստական Գերմանիայի դեմ սովորական ժողովրդի մղած Հայրենական Մեծ պատերազմում մեր ավիացիան պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ։

Մեր Հայրենիքի պանծալի բազեներն օդային կատաղի ճակատամարտերում ջախջախեցին գերմանական գովարանված ավիացիան, որով և գործողություն ապահովեցին Կարմիր Բանակի համար և մեր երկրի բնակչությանն ազատեցին թշնամու օդային ամբակոծություններից։»

Այդպիսի գնահատական տվեց ընկեր Ստալինը սովորական ավիացիային, իր 1945 թ. օգոստոսի 19-ի հրամանում։ Պատերազմը ցուց տվեց, որ Սովորական Բանակը, որը դինված է սուալինյան ամենաառաջավոր

ռազմական գիտությամբ ու սարքավորված նորագույն ռազմական տեխնիկայով, մեր ժամանակների առաջնակարգ բանակն է Հանդիսանում: Սովետական Ռազմաօդային ուժերը, կազմելով հիմնական զորատեսակներից մեկը, մարտերում ցուցադրեցին իրենց անխորտակելի ուժը և իրենց թշնամիների ավելացիայի հանդեպ սմեցած գերազանցությունը: Սովետական ժողովուրդը, նրա կառավարությունն, արժանի կերպով նշեցին մարտական ծառայություններն՝ օդաչուների, շտրումանների և օդային հրածիգների, որոնց թվում հաշվում են՝ երկու հազարից ավելի Սովետական Միության Հերոսներ, վաթսուներեք՝ կրկնակի Հերոս և երկու՝ եռակի Հերոս: Պատերազմի տարիների ընթացքում Ռազմա-օդային ուժերի մոտ 200 հազար զինվորներ, սերժանտներ, սպաներ և գեներալներ պարզեատրվեցին ՍՍՌ Միության շքանշաններով՝ ու մեդալներով: Սովետական Միության եռակի Հերոս Ա. Ի. Պոկրիչկինը պատերազմի ժամանակ փառավոր ուղի անցավ՝ շարքային օդաշությունում միալորման հրամանատարությունը: Նրա անձնական հաշվում թվարկվում է թշնամու 59 ցած զցած ինքնաթիւներ նաև մարտերով թուել է 240.000 կիլոմետր տարածություն: Այդ մարտերում նա իրեն հանգիս է բերել որպես անխոռնչ նորարար, անվեհեր օդային մարտիկ, ժամանակակից ռազմական գիտության բոլոր կանոններով՝ թշնամուն հարվածել իմացող:

Նրա անմիջական աշակերտներից 30-ը գարձել են Սովետական Միության Հերոսներ:

Սովետական Միության եռակի Հերոս Ի. Կաժեգուրը պատերազմի ժամանակ անձամբ ցած զցեց թշնամական 62 ինքնաթիւ: Սովետական Միության կըրկ-

նակի Հերոսներ՝ Գ. Ա. Ռեշկալովիք ցած զցեց՝ 56, Գ. Բ.  
Գլինկան՝ 50 թշնամական ինքնաթիւններ։ Պակաս պատ-  
կառելի չեն նաև ստալինյան ավիացիոնի փառարան-  
ված մյուս շատ հերոսների մարտական հաշիվները։  
Միայն կենինի-Ստալինի մեծ պարտիան կարողացավ  
դատարարակել անվեհեր օդային մարտիկների, Հայրե-  
նիքին նվիրված հայրենասերների այդպիսի ցեղը Սո-  
վետական ժողովուրդը, հաղթող-ժողովուրդը, իրավ-  
մամբ պարծենում է, իր օդաչուների մարտական փառ-  
քով։



Սովետական ժողովուրդը սիրում է իր ավիացիան և  
միշտ մտաւցել է ու մատուցում է նրան ամենայն օդ-  
նություն։ Հայրենական Մեծ պատերազմի ծանր տարին,  
երբ կատաղի ճակատամարտ ծավալվեց Վոլգայի վրա,  
Ստալինգրադի պատերի մոտ, ամբողջ երկրույկ մեկ հըն-  
չեց Հայրենիքի հիանալի հայրենասերի, սարատովյան  
կոլխոզնիկ Ֆերապոնու Գոլովատու ձայնը։ Ընկեր  
Ստալինին ուղղած իր նամակում Ֆ. Գոլովատին հայտ-  
նեց, որ ցանկանում է իր աշխատանքային խնալողու-  
թյունների հաշվին ձեռք բերել մի մարտական ինքնա-  
թիւ և այն նվիրել Ռազմա-օդային ուժերին։ Գոլովա-  
տու նվիրած առաջին մարտական ինքնաթիւով կոր-  
ծանիլ-օդաշուր Բորիս Երյոմինը ցած զցեց՝ գերմանական  
Դ ինքնաթիւ, և երկրորդ ինքնաթիւով, որ նվիրել էր  
նույն կոլխոզնիկը՝ գերմանական 6 մեքենա։

Գոլովատու և նրա բազմաթիվ հետեւրդների հայրե-  
նասիրական նախաձեռնությունը երկրում միահամուռ  
արձականքի հանդիպեց։ Բոլոր տեղերից ստացվում էին  
սովետական թարգիկանց աշխատանքային խնալողու-

Մյուսներն ինքնաթիռներ կառուցելու համար և ավիացիան լրացուցիչ կերպով ստացավ կործանիչների, զբո՞շիչների ու ամրակոծիչների շատ էսկադրիլիաներ։ Դա ժողովրդի մեծ, անգնահատելի նվերն էր իր նուզմա-օդային ուժերին։ Սովետական մարդկանց հայրենասիրությունը թիկունքում, ել ավելի բարձրացրեց օդաչունակատայինների ոգին։ Հայտնի օդաչու Ի. Կոժեգուրին արվեց այն կործանիչը, որը կառուցվել էր կուտնանասկան Վ. Կոնկի միջոցներով։ Այդ կործանիչով Կոժեգուրը Յասսայի շրջանում ութ օրվա մարտերի ընթացքում ցած գցեց թշնամական ութ մեքենա։

Սովետական ավիացիայի պատմությունը լի է փայլում օրինակներով, որոնք վկայում են ժողովրդի՝ Օդային Նավատորմի, նրա կազմերի նկատմամբ ունեցած մեծ սիրո մասին, սովետական մարդկանց հայրենասիրական պատրաստակամության մասին՝ ամենայն աշակեցություն ցույց տալու հայրենական ավիացիայի հըգորության հետագա ամրապնդմանը։

ՍՍՌՄ Օդային Նավատորմի օրը, որն սկսած 1933 թվից նշում է ողջ երկիրը, դարձել է աշխատավորների սիրած տոններից մեկը։

Հետպատերազմյան ստալինյան հնդամյակում ավիացիայի առաջ բացվում են վիթխարի հեռանկարներ։ Հնդամյակի վերջում ավիացիոն գծերի ցանցը մեր երկրում կհասնի 175 հազար կիլոմետրի։ 1940 թվի համեմատությամբ ուղևորների փոխադրումը կավելնա շատ անգամ, բեռներինը՝ ավելի քան 13 ագամ, փոստինը՝ 7 անգամ։ Շարքի մեջ կմտնեն նոր գծեր, աերոկայարաններ, օդանավահանգիստներ, իսկ ինքնաթիռային պարկը կըրանա նոր տիպի մեքենաներով։ Անընդհատ

աճում է ավելացիայի կիրառումը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում:

Լենինի-Ստալինի պարտիայի զեկավարությամբ մեր ժողովրդը հաջողությամբ կենսագործում է հետպատերազմյան ստալինյան հնգամյակը, վստահաբար շարժվում է առաջ՝ դեպի կոմոմիզմը:

Արդեն 1948 թ. մեծ շափով գերազանցվեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման նախապատերազմյան մակարդակը: Արդյունաբերության համախառն արտադրանքը 1948 թվին՝ 1940 թվի համեմատությամբ կազմեց 118 տոկոս: Ոչ պակաս ապշեցուցիչ են նաև գյուղատնտեսության հաջողությունները. հացահատիկային կուլտուրաների բերքը, ՍՍՌՄ-ում ամբողջությամբ վերցրած, կազմեց ավելի քան 7 միլիարդ վութ և փոքր պակասությամբ հասավ նախապատերազմյան 1940 թ. մակարդակին: -

Սովետական Միության 1949 թվի բյուջեն, որը հաստատված է ՍՍՌՄ Գերագույն Սովետի կողմից, կազմում է՝ եկամուտների գծով ավելի քան 446 միլիարդ. իսկ ծախսների գծով ավելի քան 415 միլիարդ ուղարկված է Անդակսորդ բյուջե, ծախսների նկատմամբ եկամուտների գերակշռություն ունենալը, կապիտալիստական երկրների համար անիրականանալի երազանք է հանդիսանում: Կապիտալիստական երկրներում պակասորդն առաջին հերթին լրացվում է հարկերի հաշվին, որոնք ամբողջ ծանրությամբ ընկնում են աշխատավորների վրա: Մեր բյուջեյում բնակչությունից գանձվող հարկերը կազմում են միայն մոտ 8,2 տոկոսը: Սոցիալիստական պետության բյուջեն արտացոլում է մեր խաղաղ

շինարարության վերիսարի հաջողությունները, որն իրականացվում է բոլշևիկյան պարտիայի և Մեծ Ստալինի ղեկավարությամբ։ Մեր բյուջեյի գրեթե երկու երրորդը, մոտ 272 միլիարդ ռուբլի, ծախսվում է ժողովրդական տնտեսության և սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորման համար։

Բյուջեի միայն 19 տոկոսն է նախատեսված ջինված Ռւժերը պահելու համար։ Այդ միջոցներով ապահովվում էն բոլոր ծախսերը՝ Սովետական Բանակի, Նավատորմի և Ավտացիայի, որոնք կոչված են աշալրջորեն պահապան կանգնելու սովետական մարդկանց խաղաղ աշխատանքին, պահպանելու խաղաղությունը և մեր սոցիալիստական Հայրենիքի անվտանգությունը։ ՍՍՌՄ-ի բյուջեն, դա ժողովրդական ծաղկման, կոմունիզմի հաղթական կառուցման բյուջեն է, երկարատև խաղաղության և բոլոր երկրների ժողովուրդների միջև բարեկամական համագործակցության բյուջեն։

Մեր երկիրը գտնվում է նոր, մեծ վերելքում։ «Այդ վերելքը երևում է տնտեսական հաջողություններում, կուլտուրական աշխատանքի թափի և բովանդակության մեջ, սովետական ժողովրդի, որը բարձրացել է նոր, ավելի բարձր աստիճանի վրա, բարոյա-քաղաքական միասնության մեջ» (ՄՈԼՈՏՈՎ)։

Հավատարիմ մնալով իրենց մեծ առաջնորդ՝ ընկեր Ստալինի ցուցումներին, Սովետական Միության ժողովուրդները խաղաղ շինարարություն ծավալելով, աշալրջորեն հետեւում են միջազգային իմպերիալիստական ռեակցիայի մեքենայություններին։

«ԱՄՆ-ի և Անգլիայի այժմյան ղեկավարների քաղաքականությունը, — ասում է ընկեր Ստալինը, — ապ-

բեսիայի քաղաքականություն, նոր պատերազմ արձակելու քաղաքականությունը է։ Սովետական պետության արտաքին քաղաքականությունը՝ դա խաղաղության և երկրների միջև խեկական համագործակցության քաղաքականություն է։ Սովետական կառավարության խաղաղական քաղաքականությունը պշտամանում են նոր դիմոկրատիայի երկրները, ամբողջ աշխարհի բանվորներն ու աշխատավորները։ Խաղաղության և դիմոկրատիայի կողմնակիցների միջազգային լագերը, որի ավանդարդում կանգնած է ՍՍՌՄ, ավելի ու ավելի է անում ու ամրանում, վերածվելով մեծ և անկործանիլի ամի:

«Մինչդեռ,— ասված է ՍՍՌ Միության Զինված Ռժեգիստրի Մինիստրի № 10 հրամանում,— Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարող շրջանները, ձգտելով բռնի կերպով հաստատել իրենց համաշխարհային տիրապետությունը, կիրառում են ազրեսիայի և նոր պատերազմի հրահրման քաղաքականություն, Սովետական Միությունը հաջողությամբ կենսագործելով ժողովրդական մարդու պայքարում է ամբողջ աշխարհում կայուն դիմոկրատական խաղաղության համար։

Այս պայմաններում Սովետական Զինված Ռժեգիստր պետք է անդուզ կերպով պահպանեն մշտական և բարձր մարտական պատրաստություն։

Սովետական մարդիկ կարող են վստահ լինել, որ մեր թանակը, Ավիացիան և նավատորմն աշակերգ կերպով կանգնած կլինեն իրենց սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության գիրքերում։

Ստալինյան իմաստուն արտաքին քաղաքականու-

Յիունը մերկացրեց համաշխարհային պատերազմի նոր հրձիգների մանյովքներն ու իսկական նպատակները: Լենինի-Մտալինի իմաստում պարտիան սովետական մարդկանց սովորեցնում է շմոռանալ խաղաղության թշնամիների նենք մեքենայությունների մասին, հիշել, որ խաղաղության և անվտանգության գործը, մեր պետական շահերի ապահովման գործը՝ պահանջում է Սովետական Զինված Ռւմերի հզորության հետագա ամրապնդում, նրանց մշտական մարտական պատրաստությունն՝ իրենց սոցիալիստական Հայրենիքը պաշտպանելու համար:

Այդ ազնիվ գործին աջակցելուն կոչված է սովետական Հայրենասերների նոր կամավոր ընկերությունը՝ ԱԱԿԲ (ДОСАВ): Ինքն անունն՝ Ավիացիային աջակցող կամավոր ընկերություն, արդեն իսկ կանխորոշում է այդ ընկերության նպատակներն ու ինդիրները, որոնք անմիջական արձագանք ու պաշտպանություն գրտան մեր երկրի աշխատավորական լայն խավերի մեջ:

Ավիացիային աջակցող կամավոր ընկերությունը նրանուակ ունի աջակցելու ավիացիայի հզորության ամրապնդմանը: Ընկերությունն իր անդամներին դաստիարակում է սովետական Հայրենասիրության և սովետական ազգային հպարտության ոգով, սովետական Հայրենիքին նվիրվածության ու Սովետական պետությունը պաշտպանելու պատրաստակամության ոգով:

### ՀԱՅՐԵՆԻՔԻ ԹԻՎԵՐԸ

Խուսներն առաջինն աշխարհում օդը նվաճելու ուղի բացեցին: Նրանք ամենամեծ ներդրումն արեցին ամբողջ աշխարհում ավիացիայի զարգացման գործում:

հուսաստանն՝ ավիացիայի հայրենիքն է։ ԱԱԿԸ անդամները պետք է իմանան հայրենական օդային նավատորմի փառավոր պատմությունը, ոռուական այն պիտնականների, գյուտարարների, օդագնացների անուններն ու գործերը, որոնց պատկանում է ավիացիայի բնագավառում խոշորագույն հայտնագործությունների պատիվը։

Միխաիլ Լոմոնոսովը գիտականորեն հիմնավորեց այն մարմինների թոփչքի հնարավորությունը, որոնք ավելի ծանր են, քան օդը, հնարեց և կառուցեց հելիկոպտերի մոդելը, որը բարձրացնում էր շերմաշափը, օդի վերին շերտերի շերմաստիճանն որոշելու համար։ Մ. Վ. Լոմոնոսովը, այնուհետև Դ. Ի. Մենդելեևը, մշակեցին օգերեռութարանության և աերոդինամիկայի թեորիական և գործնական հիմունքները։ Ժամանակակից աերոդինամիկայի ստեղծողները հանդիսանում են ռուական գիտնականներ՝ Ն. Ե. Ժուկովսկին, Կ. Է. Ցիոլկովսկին, Մ. Ա. Չապլիգինը։ Համաշխարհային ավիացիոն գիտության առաջնորդ Ն. Ե. Ժուկովսկին իր թեորիական հետազոտություններով շատ առաջ անցավ անդրսահմանյան ավիացիոն մաքից։ Նա ցույց տվեց ավիացիայի թեորիայի զարգացման ուղին և նրա կիրառումը պրակտիկայում։ Նրա գիտական հետևողությունների հիման վրա են այժմ կազմվում բոլոր աերոդինամիկական հաշիվներն՝ ամբողջ աշխարհում։ Արտասահմանյան գիտնականներից շատ տարիներ առաջ Կ. Է. Ցիոլկովսկին հիմնավորեց ռեակտիվային շարժիչներով հանդերձված և ամբողջությամբ մետավից պատրաստված օդանավերի կառուցման հնարավորությունը։ Ավիացիայի, հրթիռագնացության և միջ-

մոլորակային հազորդակցության նկատմամբ իր աշխատություններում, նա առաջինը մշակեց ռեակտիվային շարժման թեորիան:

Ռայտ եղբայրների սավառնակի երկան գալուց քսանմեկ տարի առաջ ստեղծվել էր սավառնակ հանձարեղ ուսւագիտնական և գյուտարար Ա. Ֆ. Մոժայսկու կողմից: Նա առաջինը սավառնակի վրա սարքեց շարժիչ, որը շարժման մեջ էր դնում պտուտակը:

1882 թվի հունիսի 20-ին Կարմիր Գյուղի ռազմադաշտից, Պետերբուրգի մոտ, օդ բարձրացավ Ալեքսանդր Ֆեոդորովիչ Մոժայսկու կոնստրուկցիայի՝ աշխարհում առաջին ինքնաթիրը, որը վարում էր ուսւամեքենապետ իվան Նիկիֆորովիչ Գոլուբելը:

Ա. Ֆ. Մոժայսկու փորձերը, որոնք նախորդել են առաջին ինքնաթիրի ստեղծմանը, նրա թեորետիկական հետազոտությունները տարրական աերոդինամիկայի բնագավառում, շատ տարիներով նախորդել են անդրածանույան տեխնիկական մտքին: Ա. Ֆ. Մոժայսկու որպես ավիացիայի նախահայր գործերը, կազմում են ուսւամեքենավորդի ազգային հպարտությունը, մեր Հայրենիքի հպարտությունը:

Ավելի քան քառասուն տարի առաջ հայտնի ռուս ավիատոր Բ. Ի. Ռոսինսկին ազատ թռիչք գործեց սփական կոնստրուկցիայով՝ ղեկավարվող սլաների վրա, իսկ 1910 թվին ուսւամերիստ Գ. Վեկչին հաստատեց սավառնելով թռչելու աշխարհում առաջին ռեկորդը: Նա օգոստ պահվեց 4 րոպե 36 վարկյան:

Առաջին անգամ 1913 թ. Ռուսաստանում կառուցվեց իր ժամանակի համար աշխարհի ամենամեծ՝

«Բուսակի Վիտյալ»<sup>\*)</sup>) ինքնաթիռը, իսկ մի տարի հետո՝ «Բլյա Մուրոմեց»-ը: Նա ուներ շորս մոտաբ, յուրաքանչյուրը 150 ձիու ուժի հղորությամբ: Վերին թևի լայնքը հասնում էր 37 մետրի, իսկ քաշը՝ լրիվ թեռնրվածությամբ, հավասարվում էր 5000 կիլոգրամի: Ինքնաթիռն օդու էր բարձրացնում 12 մարդ: Նրա առավելագույն արագությունը՝ մեկ ժամում 100 կիլոմետր էր: Առաջին ոռուսական գիրանտ ինքնաթիռը 1914 թ. հաստատեց 15 ուղևորներով թոխքի համաշխարհային ռեկորդը:

Այդպիսով, Ռուսաստանում դրվեց բազմամուսոր ժանր ինքնաթիռների շինարարության նկիգը, Ռուսաստանում հանդիս եկավ աշխարհում առաջին՝ Դրմիտրի Գրիգորովիչի կոնստրուկցիայի թոշող նավը, որը մեկ ժամում 100 կմ. արագություն ուներ: Դ. Պ. Գրիգորովիչը կառուցեց նաև աշխարհում առաջին՝ հագագլող հենասարքով ինքնաթիռը: 1911 թվին Գ. Ե. Կոտելնիկովը պատրաստեց և արտօնագրեց աշխարհում առաջին պարկային պարաշյուտը, անվանելով ույն՝ РК-1 (Ռուսական, Կոտելնիկովի առաջին մոդել): Ռուսական գիտնականների, և կոնստրուկտորների անոնքները կանգնած են համաշխարհային ավիացիոն դիտության առաջնորդների առաջին շարքում:

Ռուսական սավանորդներն առաջինն աշխարհում ինքնաթիռների վրա ցուցադրեցին բարձրագույն պիլոտաժը և սուս գիտնականների օգնությամբ գիտականորեն հիմնավորեցին այդպիսի պիլոտաժի հնարավորությունը: 1913 թվի օգոստոսի 27-ին փոխ-կապիտան Պ. Ն. Նեստերովն ինքնաթիռի վրա կատարեց

<sup>\*)</sup> «Ռուսական Դյուցազն»

«մահօդակ»: Դիմելով իր ընկեր-օգաջուներին, Նեստերովն ասաց: «Ծագմական օդաշուն չի կարող յուլա զբնալ առանց բարձրագույն պիլտուաժի ֆիգուրաներ կատարել կարողանալու: Ուղղաձիր վիրաժները և սահումները, շրջումներն ու օղակները, պետք է հանդիսանան պարտադիր ծրագիրն այն օդաշուի, որը չի ուղում կատարել համի կամ խաղաղ աղավնու զեր: Ավագիայի մասնակցությունն ապագա պատերազմում հանգեցնում է տարատեսակ տիպերի ինքնաթիւների միջև պաշտարի: Անխուսափելի օդային մարտերը նըմանվելու են բազեների հարձակումներին՝ ապահների վրա... Խսկ ո՞վ ձեզնից կկամենա ագռավ լինել:

Մինչդեռ նեստերովը ցուցադրում էր իր «Ֆիկուրային թոփշի շկոլան», որու ուղմական օդաշու, պարուշիկ Պոպլավկոն, աշխարհում առաջինն՝ ինքնաթիւնի գոնդովի առջեի մասում տեղափորեց գնդացիր և թոփշի ժամանակ հաջող կերպով կրակեց մի քանի անգամ: Խմանալով այդ մասին նեստերովը ձեռնամուխ եղավ այնպիսի մեխանիզմի մշակմանը, որը հրաձրգությունը համաժամանակացներ օդապտուտակի պառականն էր, կամ այլ կերպ ասած՝ թույլատրեր հրաձրգությունը «պառատակի միջով», այսինքն այն պահերին, եթե զնդացիրի փողը ծածկված չէ օդապտուտակի թաթով:

Պյոտր Նեստերովն առաջին համաշխարհային պատերազմում իրագործեց մարտի մի այնպիսի եզրակական, որին ձեռնահաս են միայն քաջերից քաջագույնները և որը հետո մատշելի դարձավ միայն սովորական օդաշուներին: Նեստերովն առաջինն իրագործեց թշնամական ինքնաթիւնի խոյտարումը: Այդ 1914

թվին էր: Իսկ երկու տարի հետո ոռոսական ավագագույն օդաշուներից մեկը, այժմ ողջ և առողջ Կ. Արցեսկովը, ցուցադրեց՝ առաջին անգամ նրա կողմից կիրառված, ինքնաթիոր շտոպորից (առօր) հանելու միջոցը: Մինչև Արցեսկովը շատ օդաշուներ համարում էին, թե շտոպորի վիճակն ընկնելը կործանում է սպառնում: Մանրամասն ուսումնասիրելով ինքնաթիոր վարքն օգում՝ շտոպորի վիճակն ընկնելու ժամանակ, Արցեսկովը դատվ մեքենան շտոպորից հանելու եղանակը և այն սովորեցրեց իր ընկեր օդաշուներին: Հետագայում սովետական գիտնական պրոֆեսոր Վ. Ս. Պիշնովը մշակեց շտոպորի թեորիան, որով այժմ դեկավարվում են աշխարհի բոլոր ավիատորները:

Յարական Ռուսաստանն ոլ միայն չէր պաշտպանեամ ոռոսական գիտնականների, գյուտարարների ըստեղծագործական նախաձեռնությունը, եղածուների նորարարությունը, այլ և ամեն կերպ արգելակում էր հայրենական ավիացիայի գարդացումը: Նեստերովի սխրագործությունը ցարական շինովնիկներն անվանեցին «անիմաստ և անտրամաբանական»: Մոռացման մատնվեց օդաշուր Պոպլավկոյի գյուտը: Ավիացիան տեխնիկայի զարգացմանն արգելակում էր ոլ միայն ցարական Ռուսաստանի արդյունաբերկան հետամմացությունը, լավորակ պողպատների, հատուկ դադդյանների, շարժիչների և այլնի բացակայությունը: Հիմնական պատճառը ցարական շինովնիկների ողորմելի ստրկամտությունն էր արտասահմանի առաջ: Ռեակցիոն մամուլը փառաբանում էր միայն օտարերկրյա օդաշուների նվաճումները, թեկուզ և նրանք բավական

ուշ և այն էլ վատ էին ընդօրինակում այն, ինչին առաջինը հասել էին ոռաական օդաշոմները:

Յարական կառավարությունը հոգ շէր տանհամ իր ավիացիոն արդյունաբերությունն ստեղծելու մասին, համարելով այն դատարկ, անիրական հնարանք: Ծուսական դիտնակների փայլում նվաճումները թթու էին դրվում դեպարտամենտի թղթակալներում, որը հրաժարվում էր ֆինանսավորել ուսու ամիսատորների գյուտարարական և հետազոտական աշխատանքը: Ավելի հասարակ բան էր՝ մեքենաներ գնել արտասահմանից. Հոգսերն ավելի քիչ էին և կարելի էր օգտվել ռազետական գանձարանի» հաշվին, որն առատաձեռն միջոցներ էր բաց թողնում օտարերկրյա ավիացիոն ֆիրմաներից հնացած ինքնաթիւններ գնելու համար: Ծեակցիոն բուրժուակալվածատիրական կարգը և ցարական Թուսաստանի տնտեսական հետամնացությունը, խանդարում էին հայրենական ավիացիայի զարգացմանը:

Միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռելուցիան ավիատորների ստեղծագործական աշխատանքի համար բոլոր պայմաններն ստեղծեց: Կազմակերպվեցին նոր գիտական կենտրոններ և օդաշումների, տեխնիկների ու մեխանիկների դպրոցներ: Տաղանդավոր գիտնականների պլեադան պրոֆեսոր Ն. Ե. Ժուկովսկու գլխավորությամբ էնտուզիազմով ձեռնամուխ եղավ ստեղծագործական մեծ աշխատանքի՝ իր հայրենական, սովետական ավիացիան ստեղծելու համար:

Սովետական ավիացիան դառնում է իսկական ժողովրդական ավիացիա, միլիոնավոր աշխատավորների հարազատ գործը: Լենինի-Ստալինի պարտիան

ամեն կերպ խրախուսում է՝ մասսաների առնդագործական նախաձեռնությունը, օգնում է սովետական մարդկանց հաղորդակից լինելու ավիացիոն կուլտուրային, տիրապետելու ավիացիոն դիտելիքներին։ Սովետական Միության հասարակայնությունն ամենապործնական մասնակցություն է ունենում հզոր օդային նավատորմի կառուցմանը։

1923 թվի մարտին սկսում է ծավալել իր մեծ գործունեությունը, Լենինի-Մտավինի նախաձեռնությամբ ստեղծված Օդային Նավատորմի բարեկամների կամավոր ընկերությունը՝ ՕՆԲԸ (ՕՃԲՓ)։ Կարճ ժամանակամիջոցում ՕՆԲԸ շարքերը մտան մոտ երկու միլիոն աշխատավորներ։ Ընկերությունն իր հիմնական խնդիրն էր համարում՝ օգնել պարտիային և կոռավարությանը Սովետական Օդային Նավատորմ ըստեղծելում։

ՕՆԲԸ-ի մեջ մտած աշխատավորների հայրենասիրությունը փայլուն կերպով արտահայտվեց այն օրերին, երբ շարանենգ անգլիական իմպերիալիստները պատերազմի կոչ էին անում՝ ընդդեմ երիտասարդ Սովետական պետությանը։ Ի պատասխան լորդ Քերգոնի նենգ ուղարկմատումի, ՕՆԲԸ-ի շարքերը մտան նոր հարցուր հագարավոր մարդիկ։ ՕՆԲԸ-ի անդամների կամավոր մուծումներով կառուցվեցին սովետական առաջին էսկադրիլիաները։

Ավիացիոն տեխնիկայի պրոպագանդայի շնորհընթաց Օդային Նավատորմի բարեկամները կառուցում են Հանգարներ և օդանավակալայններ, նյութական օգնություն են ցույց տալիս գիտա-հետազոտական աշխատանքին, հասարակայնության ուժերը ներ-

դրավում են Հայրենական առաջին ավիացիոն մոտորի ստեղծման դրծին:

Բոլշևիկյան պարտիան հասարակական ինքնապրծունեությունը ճիշտ հունով ուղղելով, մեծ ուշադրություն և օգնություն ցույց տվեց նոր ընկերությանը՝ Օնթի-ին: Բոլշևիկյան պարտիայի XIII համադրամարը հանդիսավոր կերպով Օնթի-ից՝ Օդային Նավատորմի համար ընդունեց ինքնաթիւների Վ. Ի. Լենինի անվան մի էսկադրիլիա: Համագումարը գոհունակությամբ նշեց Ընկերության հաջողությունները և առաջարկեց բոլոր պարտիական կազմակերպություններին՝ ամեն կերպ օգնելու Օնթի-ին՝ հզոր Կարմիր Օդային Նավատորմ ստեղծելու դաշտավարը պրոպագանդելու դրծում:

Սովհատական ավիացիայի հղորության ամրապնդմանը կոչված առաջին հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ ակտիվ մասնակցություն ունեցան Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտներն ու զինակիցներն, ընկերներ՝ Ֆրունզեն, Չերտինսկին, Մոլոտովը, Վորոշիլովը, Շվերնիկը և պարտիայի ու սովհատական պետության նշանավոր այլ շատ գործիչներ:

1924 թվին Մ. Վ. Ֆրունզեն, որը Օնթի-ի զեկայարներից ու կազմակերպիչներից մեկն էր, ասում էր.

«Լայն մասսայական ավիացիոն աշխատանքը պետք է ավելի ու ավելի խորհրդական ընդունի և օդային նավատորմի շինարարության բնագավառում բերի անմիջական պրակտիկ նվաճումների: Կարևորագույն խնդիրներն այդ ուղղությամբ են համարում եմ. առաջինն՝ աշակեցություն հայրենական ավիացիոն արդյու-

նաբերության զարգացմանը, երկրորդ՝ պլաներացին գործի զարգացումը։ Առաջինը՝ նյութական բազա կտա մեր ապագա հզոր օդային նավատորմին, իսկ երկրորդը՝ կապահովի նրան բազմաթիվ կաղղերով՝ խիզախ և հմուտ թոփշային կազմ ստեղծելու համար։

Մեր գործումեռնային համար սկսվում է ժամանակը՝ առօրյա աշխատանքի։ Այնքան ավելի մեծ էներգիայով մենք այն կտանենք։

— Աշխատավոր ժողովուրդ, կառուցի՛ր օդային նավատորմը, — այս խոսքերը դարձել են մեր երկրի միլիոնավոր աշխատավորների նշանաբանը։ Օնթօ-ի առօրյա աշխատանքը, որի մասին ասել էր Մ. Վ. Ֆրունզեն, արտահայտվում է բնակչության մեջ ավիացիոն-տեխնիկական արոպագանդա կազմակերպելու և մասսայական ուսումնական ու սպորտային աշխատանք ծավալելու մեջ։

Այդ ժամանակաշրջանում անց են կացվում մի շաբաթ նշանավոր թոփշներ, որոնք հոշակեցին սովետական ավիացիան հարազատ երկրի սահմաններից հեռվում։ Սովետական մոտորներով մատակարարված ինքնաթիռների վրա կատարվում է այն ժամանակված համար վիթխարի՛ Մոսկվա-Պեկին թոփշը։ 1926 թվին Միխայիլ Գրոմովը 3 օրվա ընթացքում ինքնաթիռով Եվրոպայի շուրջ թոփշ է գործում, շահելով անցյալում հայտնի ռեկորդը։ Մի տարի հետո օդաչու Ս. Շեստակովն ստարտ տալով Մոսկվայում, ֆինիշին է հասնում Տոկիոյում։ 1928 թվին երկրի ավիացիան հասարակայնությունն ակտիվ մասնակցություն է ունենում Արկտիկայում աղետի ենթարկված «Բիտակա»

օդանավի անձնակազմի փրկման համար էքսպեդիցիացիայի կազմակերպմանն ու անցկացմանը:

Օդային նավատորմի բարեկամների ընկերության միջոցներով 1926-ից մինչև 1928 թիվը կառուցվել է երկու հարյուր երեսուներեք ինքնաթիւ:

«Պրոլետարներ, մոտորներով շարվի՛ր» կոչում էր աշխատավորներին սովետական էպոխայի չափագույն և տաղանդավոր պոետ Վլադիմիր Մայակովսկին: Հայրենասեր-պոետի շատ ոտանավորներ ու լոգունդներ նվիրված էին օդային նավատորմին: Նա պոետական մեծ կրթությամբ կող էր անսամ սովետական մարդկանց ամրապնդելու օդային նավատորմը: Նա դրում էր.

«Ի պատասխան շեմքերիններին  
Վեր սլացի՛ր էսկադրիլիա.  
Պատուակներովդ  
Թշնամական երկինքն ակոսի՛ր»:

Երկրում ստեղծվում են հաղարավոր խմբակներ, որոնցում երիտասարդությունը մեծ եռանդով ուսումնասիրում է ավիացիոն գիտելիքների հիմունքները: Հանդես են գալիս առաջին պլաներային կայանները, կազմակերպվում են օդային սպորտսմենների՝ անմռառոր թոփշքի առաջին վարպետների մրցությունները: Ավիամոդելիզմը դառնում է աճող սերնդի սիրելի գրադմունքներից մեկը: «Ավիամոդելային գործն՝ օդային օվկիանի հրամանատարների և օդային նավերի ինժեներների պատրաստման առաջին աստիճանն է», — գրում էր Կ. Ե. Վորոշիլովը:

Հավեպույն սովիտական կոնստրուկտորներն աշ-  
վիացիային մերձեցել են ավիամոդելային և պլաներա-  
յին խմբակներում: «Երիտասարդ ավիացիային» մեծ ո-  
շագրություն էին դարձնում՝ պաշտամային տե-  
րուակումբների համար վարժական թեթև-բարորտային  
ինքնաթիսի առաջին կոնստրուկտոր՝ Ա. Յակովլես,  
զիւության և տեխնիկայի վաստակավոր գործի՝  
պրոֆեսոր Պիշնովը, կոնստրուկտոր՝ Իլյուշինը, օդա-  
չուներ՝ Գրոմովը, Յումաշելը և ուրիշ շատ, ականավոր  
սովետական ավիատորներ: Համամիութենական 17-րդ  
ավիամոդելային մրցությունների մասնակիցներին ուղ-  
ղած ողջույնում Սոցիալիստական Աշխատանքի Հերոս  
Ա. Ա. Յակովլես պրում էր իր երիտասարդ բարեկամ-  
ներին.

«Մեր ստալինյան փառավոր ավիացիայի օդաչու-  
ներ ու կոնստրուկտորներ դառնալ ցանկացողներ ձեր  
մեջ շատ կան: Դա հիմնալի ձգում է:

Բայց հիշեցեք, որ ամենավստահելի և կարճ սովոր  
գետի այդ նպատակն, սկսվում է ավիամոդելից: Եթե  
ուրաք այժմ կառուցեք լավ մոդելներ, այն կօգնի ձեզ  
հետագայում դառնալու հմուտ օդաչուներ և կոնստրուկ-  
տորներ: Մեր Հայրենիքի հոշակավոր օդաչուներից և  
սովետական ավիացիան ստեղծողներից շատերը սո-  
վորել են ավիամոդելային խմբակներում և նվաճում-  
ների ու փառքի են հասել՝ մոդելից-պլաններին, պլանե-  
րից-ինքնաթիւուն ուղիղութեաւ: Ես, ինքս մարտական ինք-  
թիւնների կոնստրուկտոր դարձա անցնելով այդ ու-  
ղինք:

Արդեն առաջին իսկ սովետական օդային  
սովորուսմեններն իրենց հմտությամբ ապշեցնում էին

աշխարհու Սովետական երկնքում է առաջին անգամ ավիացիայի պատմության մեջ սլաներների վրա բարձրագույն պիլոտած ցուցադրում։ 1930 թվականին օդաչու Վ. Ա. Ստեփանչոնովը ցուցադրում է սլաների վրա տուածին մեռյալ օդակը։ Կենտրոնական աերո-ակումբի օդաշուները Հայոցությամբ յուրացնում են սլաներների վրա գիշերային թուշքները, օդակնացքների քարաշակելը և այլն։

Պլաներիզմի հետ կողք-կողքի բուն կերպով դարձանում է պարաշյուտիզմը՝ խիզախների ու ան-վեհերների սպորտը։ Պարտիան և կառավարությունն ամեն կերպ խրախուսում են ավիացիոն սպորտ-սմեններին, նրանց համար ստեղծում են իրենց հմտությունը կատարելագործելու բոլոր պայմանները, լավագույններին պարգևատրում են շքանշաններով ու մեդալներով։ 1935 թվականին պարգևատրված պլաներիստների և պարաշյուտիստների մի մեծ խումբ պրոմ էր, դիմելով ընկեր Մտալինին, Սովետական կառավարության ղեկավարներին։

«Մի դգացմունք է մեզ տիրապետում՝ խորն երախ-տապարտության դգացմունքը մեր մեծ Սոցիալիստական Հայրենիքի ղեկավարների նկատմամբ, որոնք նշեցին մեր հաղթանակը։

Մենք գտնվում ենք միայն սկզբին մեր ուղու, որը մենք պետք է հաղթահարենք՝ օդի խեկական տերերը դառնալու համար։ Տասնյակ հազարավոր պատանի տղաներ ու աղջիկներ՝ կենսուրախ սովետական երիտասարդության առաջավոր ջոկատներն, ընթանում են մեզ հետ այդ ուղիով, տիրապետելով՝ մոտորին ու ինքնաթիռին, պլաներին ու պարաշյուտին։

Մենք երգիշում ենք մեր Կառավարությանը, մեր մեծ պարտիալին, մեր հանձարեղ և խմաստուն առաջնորդ ընկեր Ստալինին՝ մեր բոլոր ուժերը, իսկ եթե հարկ լինի, նաև կյանքը, տալ հանուն մեր շքնաղ, օրորի վրա ծաղկող Հայրենիքի պաշտպանությանը»:

Դա սովետական ժողովրդի թեավոր ցեղի ձայնն էր: Երիտասարդ օդաչուները և պլաներիստները, պարագյուտիստներն ու ավիամողելիստները պատվով կատարեցին իրենց երդումը:

Սովետական սպորտային ավիացիան վստահաբար դուրս եկավ միջազգային օդային մրցությունների արենան և սկսեց մեկը մյուսի հետեւց ունկորդներ նվաճել: 1936 թվին վ. Պ. Զկալովը գործեց Մոսկվա-Կամչակա Ռուդի կղզի (Ռուդի կղզի) Ստալինյան մարշրուտով հոչակավոր թռիչքը:

1936 թվին Սովետական Միությունը մտավ Միջազգային ավիացիոն ֆեդերացիայի՝ ՖԱԻ մեջ, իսկ 1939 թվի վերջերին, հաստատած միջազգային ավիացիոն ունկորդների թվով, կրամեց աշախրհում առաջին տեղը:

Հյուսիսային բևեռի վրայով Զկալովի և Գրոմովի 1937 թվի պատմական թռիչքները, հիանալի սկիզբ հանդիսացան սովետական սավառնորդների ու սավառնորդութինների նոր, խիզախ ու ստեղծագործական հանդգնությունների: ՖԱԻ ունկորդների ցուցակներում յոթ անգամ նշվել է Պոլինա Օսիպենկոյի անունը, վեց անգամ՝ Վլադիմիր Կոկինակիի և Գրիգորյովայի անունները: Անմոտոր թռիչքի 59 միջազգային ունկորդներից՝ երեսունը պատկանում է Սովետական Միության պլաներիստներին ու պլաներիստութիններին: Ոչ մի պա-

Ապաշխատիստ: աշխարհում դեռևս չի ճառել 13.400 մետր  
«առաստաղի»: Այդ բարձրությունից վ. Ռումանյուկը  
լոփէք գործեց վարկանաբար բացելով արարացյուտը:  
Աշխարհում առաջին և լավագույն պարագյուտիմու-  
հիները, պլաներիստուհիները և սավառնորդուհիները՝  
սովետական կանայք ու աղջիկներն են: Կանանց  
համար բարձրագույն նվաճումը՝ մոտ հինգ կիլոմետր  
ազատ ընկնելը, պատկանում է սովետական պա-  
րացյուտիստուհիներին: Վայրամողե-  
լիութի դժով միջազգային 41 նվաճումից՝ երեսունը  
հաստատել են «փոքր ավիացիայի» սովետական պա-  
տանի կոնստրուկտորները:

Այդպես, համեմատաբար կարճ ժամանակամիջու-  
ցում, Սովետական Միությունն ամբողջ աշխարհի ա-  
ռաջ ցուցազրեց իր ավեատորների փայլուն կարգի  
վարպետությունը և մեր հայրենական ավիացիոն տեխ-  
նիկայի գերազանցությունը: Մեր ժամանակի մեծագույն  
օդաշուի ոգին, չկալովնան նորարարության և հանդպը-  
նության ոգին, ապրում է սովետական ավիատորների  
սրանշելի ընտանիքում: Ավելի քան տասը տարի է ան-  
ցել մեր ժամանակի մեծագույն օդաշուի ողբերգական  
կորուստի օրվանից, սակայն ինչպիսի՞ հպարտությամբ  
են հնչում և այժմ վ. Պ. Չկալովի՝ հանուն սովետա-  
կան ժողովրդի և նրա ավիացիայի անմահ խոսքերը.

«Սովետական ավիացիան, ստալինյան հնգամ-  
յակների իսկական զավակը, աձել է, ինչպես ասում են,  
մերկ տեղում: Այժմ սովետական ավիացիան լավա-  
դուցնն է աշխարհում: Սովետական դրծարաններում,  
սովետական նյութերից, սովետական մարդկանց ձեռ-  
քերով ստեղծվում են պողպատյա հզոր թոշոններ, ո-

բռնք իրենց որակով շատ ետ են թողնում աշխարհի լավագույն ինքնաթիռներին: Աշխարհում չկան ավելի լավ օդաշուներ, քան սովետական օդաշուներն են: Ստալինյան ավիացիայի հերոսների հերոսական սիրագործությունների առաջ խոնարհվում է ամրող առաջավոր ու պրոգրեսիվ մարդկությունը:

Միլիոնավոր աշխատավորների սրտերը լցվում են օրինական հպարտությամբ, երբ միտք է ծագում պանծալի սովետական ավիացիայի մասին, որն ամրող մարդկության համար իր թեսքի վրա տանում է՝ խաղաղություն, ազատություն, կուլտուրա և առաջադիմություն»:

Սովետական ժողովներն իր ավիացիան օգտագործեց երկրի տնտեսական ու կուլտուրական հետազոտարացման համար: Սովետական ավիացիան օգնեց յուրացնելու հեռավոր Հյուսիսի հարստությունները, ճանապարհ բացելու սառցահատներին, հետախուզություն անցկացնելու՝ ձկնորսարաններում, պայքարելու՝ դյուղատնտեսության թշնամիների, անտառային հրդեհների դեմ: Նա երկրի հեռավոր շրջանները կապել է նրա կենտրոնի հետ:

Սովետական ավիացիայի հաջողությունները հնարավոր եղան, որովհետև Ստալինի ղեկավարությամբ ստեղծված սոցիալիստական ինդուստրիան սկսեց թողարկել ավելի շատ՝ գերազանց թեթև ինքնաթիռներ ու ծանր օդային նավեր: Սովետական ավիացիան տարեցտարի աճել ու ամրապնդվել է ժողովրդի հետ չերմ և անբաժանելի միասնության մեջ, սնվելով նրա արագ աճող ուժերով: Սեփական ձեռքերով, սեփական անձնը վեր հերոսական աշխատանքով, սովետական ժողո-

«վուրդն իր Հայրենիքի համար ստեղծեց զորեղ թեր, և  
այդ թերը վեր բարձրացրին ՍՍՌՄ-ի, որպես մեծ ա-  
վիացիոն տերության փառքն ու պրեստիժը»:

Ինկեր Ատալինը դաստիարակեց ավիացիոն կոն-  
ստրուկտորների մի ամբողջ պլեադա, որը հայտնի է  
ամերուց աշխարհին:

Պետլյակովը, Պոլիկարպովը, Յակովիկը, Լավոչկի-  
նը, Խլուշինը, Տուպոլիկը, Միկոյանը, Շվեցովը, Միկո-  
յինը, Կլիմովը և ուրիշները սարքավորեցին մեր Օգա-  
յին Նավատորմը կատարելագործված տիպերի ինքնա-  
թիռներով ու մոտորներով:

Սովետական ավիացիան՝ աշխարհում ամենա-  
առաջավոր, ամենահզոր ավիացիան է: Նրա անվիճելի  
առավելությունները փայլուն կերպով ցուցադրվեցին  
Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում:

«Բանվորների, բանվորուհիների, ինժեներների և  
ծառայողների աշխատանքային էնտուզիազմը, սովե-  
տական ավիացիոն կոնստրուկտորների գյուտարարու-  
թյունն ու տաղանդավորությունը հնարավորությունն  
տվեցին մեր ավիացիան զինելու բազմահազար լավա-  
դույն մարտական ինքնաթիռներով, որոնք իրենց թերի  
վրա տարան մահ թշնամուն և անմահ փառք՝ մեր սո-  
վետական մեծ ժողովրդին» (ՍՏԱԼԻՆ):



Սովետական Հայրենասիրության անսպառ ուժը,  
որը պատերազմի փոթորկուտ տարիներին սովետական  
օդաշուներին մղում էր անմահ սիրազործությունների,  
այժմ էլ, խաղաղ շինարարության տարիներին, նրանց  
դարձնում է իրենց պատվավոր պրոֆեսիալի էնտո-

զիաստներ: Սովետական օդաշուներն աշխատում են չերմ ստեղծագործական փոխադարձ բարեկամության մեջ գիտության ներկայացուցիչների հետ և ավիացիոն արվեստում բարձր են պահում նորարարության դրոշը:

1946 թվի օգոստոսի 18-ին Մոսկվայում, Տուշինոյի օդանավակայանում կայացավ մեր ռեակտիվային ինքնաթիռների առաջին հրապարակական ցուցադրումը: Այնուհետև մայրաքաղաքի բնակիչները մի անգամ չեն տոն օրերին հիացմունքով հետեւ ռեակտիվային սալառնակների թոփշքներին:

Ավիացիոն կադրերի հմտության աճը հետ չի մընում ավիացիոն տեխնիկայի աճից: Սովետական օդաշուները հաստատորեն պահում են համաշխարհային առաջնությունը՝ պիլոտաժի արվեստում: Գնդապետ Ի. Պոլունինն աշխարհում առաջինը յուրացրեց պիլոտաժը՝ ռեակտիվային ինքնաթիռի վրա: Ռեակտիվային ինքնաթիռների վրա խմբակային պիլոտաժի առաջնությունը նույնպես Սովետական Միությանն է պատկանում: Այն, ինչ ձեռք են բերել ավելի փորձված օդաշուները, արդեն դարձել է երիտասարդ սովետական սալառնորդների սեփականությունը:

Ստալինյան անվեհեր շատ բազեներ պատերազմից հետո արդեն պարզեատրվել են շքանշաններով՝ նոր տեխնիկան յուրացնելու մեջ բարձր նվաճումների, նորարարության և բացառիկ բարձր օդաչվական վարպետության համար: Նրանց հայրենասիրական գործերն օրինակ են ծառայում Ավիացիային աջակցող կամավոր ընկերության աերոակումբների սաների ու սպորտսմենների, նրա օդաշուների, պլաներիստների ու պարաշյուտիստների համար:

Ավիացիոն մասսայական կուլտուրայի առաջին օջախները մեր երկրում եղել են աերոակումբները, որոնք սկսվել են ստեղծվել 1921 թվականին Վ. Ի. Լենինի ցուցումով։ Աերոակումբների ոգին, նրա կրմախքը, դարձել է կոմերիտմիությունը, որը 1931 թվյան IX համագումարում, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ շեֆություն ստանձնեց Ռազմա-Օդային Ռւժերի վրա։ Համագումարն այն ժամանակ որոշեց բարձրացնել և զլատավորել երիտասարդ սերնդի վիթխարի շարժումը՝ վստահելի և խիզախ, անվեհեր ու տեխնիկապես զրագետ օդաչուներ պատրաստելու համար։

Ամբողջ երկրով մեկ տարածվեց՝ «Կոմերիտական ինքնաթիոի վրա» կոչը։ Հազարավոր պատանի տղաներ ու աղջիկներ արձագանքեցին Լենինյան-Ստալինյան կոմերիտմիության կոշին, սովորելու մեկնեցին օդաշվական ուսումնարանները, Պաջըավիաքիմի աերոպակումբները, ավիացիոն արդյունարերությունը։ Սովետական երիտասարդությունը տարեց-տարի ավելի ու ավելի ակտիվ մասնակցություն էր ունենում պարագուտային և պլաններային սպորտի, ավիամոդելիզմի ծավալմանը։

Թայց ավիացիոն մասսայական աշխատանքը հատկապես լայն թափ ստացավ այն բանից հետո, երբ 1935 թվի հունիսի 12-ին ընկեր Ստալինը, ընկերներ՝ Վորոշիլովը, Կագանովիչը, Անդրեևը, Խրուշչևը և Շվենիկները այցելեցին Կենտրոնական աերոակումբը Տուշինոյում, Մոսկվայի տակ։ Պարտիայի և կառավարության ղեկավարները դիտեցին օդային սպորտամենների-

նվաճումները, խորապես հետաքրքրվեցին օդաշուների, պլաներիստների, պարաշյուտիստների և ավիամոգելիստների ուսուցման ընթացքով, զրույց արեցին նրանցից շատերի հետ, եղան կարինետներում ու ուսումնական սենյակներում և արեցին մի շարք կոնկրետ ցուցումներ ու խորհուրդներ օդաշվական կադրերի պատրաստումն բարելավելու համար:

Այդ տարին բազմահազար պատանիներ սովորելու դնացին աերոակումբները: Երիտասարդ սովետական հայրենասերների նվիրական ցանկություններն՝ ավիացիոն մասնագիտության տիրապետելու, պետության շերտ պահպանությանը հանդիպեցին: Երկրի լավագույն օդաշուներ, Սովետական Միության Հերոսներ՝ Զկալովը, Բայդուկովը, Բելյակովը, Կամանինը, Լյապիդեսկին և շատ ուրիշներ, դիմեցին ավիացիայի երիտասարդ բարեկամներին, կոչ անելով՝ համալրել և ամրապնդել Գդային նավատորմի շարքերը, մտնել արեոակումբները: Նրանք գրում էին.

«Սովետների երկրին հարկավոր են օդաշուներ. շտուրմաններ, բորտմեխանիկներ և ավիացիոն այլ մասնագետներ: Աերոակումբների պատերի մեջ, թոփշքային դաշտում, օդում, բանվորներն ու բանվորուհիները, կոլլագոգնիկները, դպրոցականներն, ուսանողներն, ստանում են իրենց առաջին օօդային մկրտությունը», ձեռք են բերում ավիացիոն մասնագիտություն, շդարեցնելով՝ աշխատանքն արտադրությունում, ուսումը՝ բուհում կամ դպրոցում»:

1936 թվին երկրում արդեն կային 140 աերոակումբներ, որոնցում սովետական երիտասարդությունը

Հաջողությամբ տիրապետում էր ավիացիոն զիտելիք-ների սկզբունքներին և զբաղվում օդային սպորտով:

Ավիացիոն հասարակայնության ոգին եղել է և մնում է սովետական երիտասարդությունը: Մանոթացեք մեր ժառարանված օդաչուների կենսագրություններին և դուք կտեսնեք, թե նրանց կյանքում ինչպիսի կարևոր նշանաձող է եղել աերոակումբն, որտեղ նրանք ստացել են նախնական պատրաստականություն, կապվել են ավիացիայի հետ, սովետիր են ստացել իրենց զիտելիքների բարձր կատարելագործման մեծ ճանապարհը մտնելու համար:

Աերոակումբներում սովորել են նշանավոր սովետական ասերը. Սովետական Միության եռակի Հերոսներ՝ ընկ. ընկ. Պոկրիչկինը և Կոժեգուրը, Սովետական Միության կրկնակի Հերոսներ, օդաչուներ՝ Լալինենկովը, Մոլողյան, Դ. Գլինկան և շատ ուրիշներ:

Հիշելով գեպի ավիացիան իր առաջին քայլերն Ալեքսանդր Պոկրիչկինը գրում էր. «Ես անձամբ օդաչուական կյանքս, նման հազարավոր այլ սովետական պատանիների, սկսել եմ պլաներային կայանից... Միավորման օդաչուների մեծամասնությունը, որի հրամանատարն էի ես Հայրենական Մեծ պատերազմի օրերին, դաստիարակվել է աերոակումբներում: Նրանք բոլորն էլ սկսել են պլաներիզմից, առաջ մեր փոքր վաստակավոր Փո—25-ից:»

Սովետական Միության եռակի Հերոս Իվան Կոժեգուրը պատմում է.

«Ես համատացած եմ, որ շատ օդաչուներ մի անգամ շեն ծանր բողեներին և հատկապես պատերազմում, բարի խոսքով հիշել աերոակումբի իրենց առա-

չին ուսուցիչ-հրահանգիչներին։ Եվ ես, Շոստկինսկու անբռակումբի նախկին սանս, ցանկանում եմ ասել ստալինյան ավիացիայի շարքերը ձգտող պատանիներին։ Համառորեն սովորեցե՞ք, լավ թոշել ուսումնավարժական ինքնաթիւների վրա, աշխատեցե՞ք, յուրացնել և հիշել անյ բոլորն, ինչ որ ձեզ ուսուցանում են, որովհետեւ ավիացիայում մանրունքներ չկան։ Երազեցե՞ք, սրբնթաց ինքնաթիւների մասին, սակայն ուշադիր կերպով ուսումնասիրեցե՞ք, աերոակումբների ունեցած վարժական հասարակ մեքենաները»։

Սմոլենսկի ֆաբրուրծուսի նախկին աշակերտ, այժմ Սովետական Միության կրկնակի Հերոս, Վլադիմիր Լեզգինենկովն աերակումբների ներկայիս շվուաներին (յունետամ) ուղղած իր դիմումում գրում է.

«Եատ ժամանակ է անցել, շատ ջուր է հոսել այն պահից, երբ ես հրաժեշտ եմ տվել աերոակումբին։ Պատերազմի տարիներին ես թուել եմ բոլոր տիսպերի կործանիչների վրա։ Պատերազմուն ես սկսել եմ, որպես սերժանտ, շարքային օդաշու։ Երեք տարի հետո ես տարել եմ Բեռլինի վրա կործանիչ ավիացիոն գոմզը։ Այդ ժամանակ արդեն փոխպնդապետ էի։ Ընդհանուր գոմզարով վերցրած՝ 50 օր կտնվել եմ օդում։ Օդային մարտերում անձամբ ոչնչացրել եմ գերմանական 35 ինքնաթիւ։

Սակայն անցնելով այդպիսի դաժան զպրոց, ես մինչև հիմա ել շնորհակալությամբ եմ հիշում աերոակումբում անց կացրած օրերս։ Զէ՞ որ այնտեղ է դըրմել ապագա օդաչվական վարպետությանս հիմքը»։

Սովետական Միության Հերոս Ա. Մարեսկը, որը չայնորեն հայտնի է ժողովրդին թ. Պոլեվոյի «Պատմը-

վածք իսկական մարդու մասին» գրքից և նույնանուն կինոնկարից, իր օդաշվական արձեստն սկսել է Կոմսոմոլսկ Ամուրի վրայի աերոակումբի կուրսանտությունից: Կարելի է Պաջրավիաքիմի աերոակումբներում իր ժամանակին ուսուցանած ավիատորների անձնվերհերոսական աշխատանքի հարյուրավոր օրինակներքերել:

Դեպի ավիացիա տանող ուղին սովորաբար սկսվում է ավիամոդելային և պլաներային խմբակներում՝ ուսանելուց: 1948 թվին լրացավ մեր երկրում ավիամոդելիզմի և պլաներիզմի գոյության 25 ամյակը: Ավիացիոն սպորտի այդ երկու տեսակները վայելում են սովետական «Պալրոցականների» ու երիտասարդության մեծ սերը: Անմոտոր թոփչքի ականավոր վարպետներ են Համադիսանում, Համաշխարհային ռեկորդամեններ, սովետական պլաներիստներ՝ ընկ. ընկ. Անոնինը, Ռաստորգունը, Սավցովը, Իլյնիկոն և ուրիշները: Սովետական պլաներիստուհի Օլգա Կլեպինկովան մեծ շափով դերազանցեց սավառնողների անդրսահմանյան ռեկորդները: Նա միտեղանի պլանների վրա թուավ 749 կիլոմետր: Երկուեղանի պլանների վրա հեռավոր թոփչքի համաշխարհային բոլոր ռեկորդները պատկանում են սովետական պլաներիստ ի. Կարտաշովին:

«Փոքր ավիացիայի» կոնստրուկտորները միայն 1938—1940 թ. թ. Հաստատեցին Համաշխարհային 30 ռեկորդ: Պատերազմից հետո, թոշող մոդելների համամիութենական 15-րդ մրցություններում, սովետական ավիամոդելիստները ցուցադրեցին միջազգային 4 նոր նվաճում և համամիութենական 8 ռեկորդ: Մրցություններում Հաղթողներն ընդունվեցին ավիացիայի մարզակ

վերշինինի կողմից, որը մանրամասն կերպով՝ հետաքրքրվեց ավիամոդելիստների աշխատանքով և նրանց մի շաբթ դործնական խորհուրդներ տվեց: Ավիացիոն հասարակայնությունը բարձր է գնահատում ավիամոդելիստ-ռեկորդսմեններ՝ Տրուշենկովի (Նովոսիբիրսկ) Մալիկի և Լյուբուշկինի (Մոսկվա), Պավլուչենկովի (Կիև), Դավիդովի (Բաշկիրական Ա.Ս.Ս.Ռ) և ուրիշ շատերի կոնստրուկտորային աշխատանքը:

1948 թվի ամռանը դնեսքրոպետրովսկիյան երկու ավիամոդելիստներ՝ Յուրի Արտյովսկովը և Բորիս Նազարենկոն ավիամոդելային մարզային մրցություններում հասան աշքի ընկնող հաջողությունների: Արտյովսկովի կոնստրուկցիան՝ պլաների իրանի մոդելն, օդում պահվեց 4 ժամ 40 րոպե: Բորիս Նազարենկովի մոդելը բարձրացավ 2800 մետր:

Յուրիա Արտյովսկովն Խոամսյա համառ աշխատանք էր թափել իր ռեկորդային մոդելի հորինման. և կառուցման վրա: Նա այժմ արդեն երազում է նոր մոդելների մասին, որոնք թուշեն ավելի բարձր և ավելի հեռուն: Նա ուզում է դառնալ իսկական ավիաշենստրուկտոր:

Պլաներիզմը և ավիամոդելիզմը՝ սպորտի մատչելի և հրապուրիչ տեսակներն են: Նրանք ԱԱԿԲ-ում պետք է ստանան մեծ թափ և ամենալայն տարածումը: Ռըքան խորն և լայնորեն ծավալվի ավիամոդելիստների աշխատանքն, այնքան շատ տաղանդավոր մասնագետներ կստանա Հայրենիքն, այնքան ավելի ուժեղ կլինի նրա օդային նավատորմը:

Աերոակումբների՝ որոնք պատերազմի ժամանակ գրեթե չեն գործում, վերակենդանացումը մեծ տոն էր

սովետական երիտասարդության համար, որի առաջ լայնորեն բաց է դեպի ավիացիա տանող ուղին: Աերակումբները զեկավարելու համար եկան նշանակոր շատ օգաշուներ, հարստացած Հայրենական Մեծ պատերազմի փորձով, Սովետական Միության Հերոսներ, շքանշանակիրներ, իրենց գործք գերազանց խմացող և անսահման սիրող մարդիկ: Նրանց առաջ պատվավոր խընդիր է դրված. պարտիական կազմակերպությունների դեկավարությամբ, Օդային նավատորմի շեֆ՝ Անդրեյան-Մալինյան կոմերիտմիության օգնությամբ, աճեցնել և դաստիարակել սովետական թեավոր մարդկանց նոր, երիտասարդ ցեղը:

ԱԱԿԲ աերոակումբների շվուաներն՝ երիտասարդ բանվորները, կոլխոզնիկներն, ուսանողներն են: Օդաշումներ, մեխանիկներ, տեխնիկներ դառնալու շերմ ձրգումը՝ մղել է նրանց դեպի ավիացիան: Ռուզին՝ որն ընտրել է յուրաքանչյուր շվուա, նրա համար լայն ճանապարհ է բացում դեպի գիտելիքները, դեպի վարդեպություն: ԱԱԿԲ-ում շվուաներն ուսումնասիրում են միայն առաջին հիմունքներն, այսպես ասած, ավիացիոն գործի «այրութենք»: Բայց նրանից, թե հրամանատարին և հրահանգչին ինչպես է հաջողվում ամրապնդել շվուաի սկզբնական գիտելիքները, զարգացնել նրա մեջ՝ հետաքրքրություն, ձգտում դեպի կատարելու որոշություն, դժվարությունները հաղթահարելու պատրաստակամություն,— շատ բանով կախված է ապագա ավիատորի ձևավորվելը:

Ավիացիային աջակցող Համամիութենական կոմավոր ընկերության կազմբյուրոն հանրապումարել է մեր տերուակումբների հետպատերազմյան գործունեու-

թան առաջին արդյունքները և նշել է նրանցից լավագուններին:

Վաստակած հեղինակությամբ օգտվում է այն աերոպումբն, որի զեկավարը Սովետական Միության կրկնակի Հերոս Վասիլի Ալեքսանդրովիչ Զայցեն է: Օդային նավատորմի այդ բոցավառ էնտուզիաստի մեջ զուգակցվում են բոլշեվիկի սքանչելի գծերը. Հրամանատար՝ զեկավարի և հանրուդի: Օդային կատաղի մարտերում մի քանի անգամ ծանր վիրավորվելուց հետո բանակից զորացրվելով, Զայցեն մեծ եռանդով ձեռնամուխ եղավ աերոակումբի վերակենդանացմանն այն քաղաքում, ուր նա ապրում է: Մինչև պատերազմն այդ աերոակումբը պատրաստում էր միայն օդաչուներ: Այժմ նրան կից ստեղծված են պլաներային, ավիամոդելային և պարաշյուտային սեկցիաներ: Նրանցում պատրաստվում են հրահանգիչներ՝ քաղաքի ձեռնարկությունների, հիմնարկությունների և դպրոցների ապագա ավիացիոն խմբակների համար:

Վ. Զայցենի գլխավորած աերոակումբը լայն ժողովրդականությամբ է օգտվում հետևում, քաղաքի սահմաններից դուրս: Սովորելու համար աերոակումբ են դաշիս նաև կոլխոզնիկները՝ շրջակայիքի գյուղերից: Ակումբն իր բաժանմունքներն է բացել գյուղական երկու շրջաններում, որ դնում են հրահանգիչներ երիտասարդ կոլխոզնիկներին պլաներիզմը և պարաշյուտիզմն ուսուցնելու համար:

Աերոակումբի գերազանց ուսուցանած օդաշումներից մեջ կարելի է հանդիպել կոլխոզնիկ Տուպտինին, տասերորդ զասարանի շրջանավարտ՝ Վալենտին Պետրովին, փոկանագործ՝ Շարապովին, մողելագործ՝ Գուրենին և

ուրիշ շատ ամենաբազմազան պրոֆեսիաների ու կվա-  
լիֆիկացիաների երիտասարդ մարդկանց։ Եարունակե-  
լով իրենց աշխատանքն ու ուսումը, նրանք կատա-  
րելագործելու ևն իրենց կվալիֆիկացիան աերուակումը  
սպորտային ջոկատում։

Աերուակումըին հայտնի դարձավ, որ հարեան գյու-  
ղական շրջանում երիտասարդ կոլխոզնիկները ցանկո-  
թյուն են հայտնել պարագել պարաշյուտային սպոր-  
տով։ Աերուակումըն անմիջապես հայտնեց կոլխոզնիկնե-  
րին, որ շուտով ակումբի սպորտամենները թռչելով նր-  
անց մոտ հյուր կգնան։ Նախապես նշանակված կիրա-  
կի օրն, ավելի քան չորս հազար կոլխոզնիկներ, առավե-  
լապես երիտասարդություն, հավաքվեցին աերուակումըի  
օդաշուներին դիմավորելու համար։ Օդային սպորտ-  
սրմենները նախ անցկացրին ցուցադրական թռիչքներ  
վարժական մեքենաների վրա, ապա պարաշյուտիստ-  
ների ցատկումներ։ Այնուհետև աերուակումըից եկած  
հյուրերը զրուցեցին հանդիսատեսների հետ ԱԱԿԲ  
աշխատանքի մասին, հրավիրեցին նրանց մտնելու Ընկե-  
րության անդամների շարքը և խոստացան ուսումն ու  
սպորտը կազմակերպելում օգնել։ Այդ ավիացիոն կի-  
րակնօրյակից մի շաբաթ հետո, հարյուր երիտասարդ  
կոլխոզնիկներ աերուակումըի օգնությամբ սկսեցին ու-  
սանել պարաշյուտային գործը։

Կուրսակու աերուակումըն իր գործունեության հնաց  
առաջին օրերից մարզի աշխատավորների մեջ սկսեց  
մասսայական ավիացիոն ինքնագործունեություն ծավա-  
լել։ Աերուակումըի շրջիկ բաժանմունքը Ֆատեֆի շրջա-  
նում կազմակերպեց պարաշյուտիստ-սպորտամենների  
պատրաստում։ Երիտասարդ կուրսանտները մեծ հե-

տաքքրությամբ լսում են աերոակումբի հրահանգիչների զրուցների՝ ավիացիայի պատմության, ստալինյան ռազմեների սխրագործությունների, իրենց հարազատ աերոակումբի փառավոր տրադիցիաների մասին։ Պատահների մեջ, որոնք լսում են այդ զրուցները, չերմ ցանկություն է առաջանում դառնալու Հայրենիքի նույնպիսի անվեհներ հայրենասերներ, ինչպիսին իրենց հայրենակիցներն են։ աերոակումբի սաներ՝ Սովետական Միության կրկնակի Հերոս Անդրեյ Բորովիխը, որի որոնցից կրսանդրին զարդարում է քաղաքացին այդուհենարոնական հարթակներից մեկը, և Սովետական Միության Հերոսներ՝ Ռենցն ու Երյումինը։

Սովետական երիտասարդ մարդու համար, որը կը լուսվ է իր ժողովրդի ազնիվ գծերը, շկա ավելի գրավիչ կերպար, քան սուլինյան հպարտ բազեի կերպարը։ Սոցիալիզմի նրկրի օգալուն ներդաշնակ կերպով զուգակցում է իր մեջ անվեհներությունը՝ հմտության հետ, համառությունը և դժվարությունները հաղթահարելու հաստատակամությունը՝ բարձր գաղափարականություն և Հայրենիքին անսահման նվիրվածության հետ։

Աերամերների խնդիրն է զյուրացնել երիտասարդությանը գեսի ավիացիան տանող ուղին։ Սկսել կարելի է ավիամոդելիզմի, պլաներիզմի, պարագյուտիզմի պարապմունքներից։ Ավիամոդելային խմբակներին ամենօրյա զեկավարություն ցույց տալը, նոր նորմակեներ ստեղծելը, նրանց օգնելը և նրանց համար հըսուահման կադրեր պատրաստելը, մեր աերոակումբների պարտականությունն է։

Վիահերսկի աերոակումբը, Գորոդոկ ավանում, ուղակի Գյուղատնտեսության մեխանիզացիայի տեխնի-

կումում, պարապմունքներ կազմակերպեց պարագյունիզմից։ Այդ պարապմունքները սովորողների մեջ հըսկայական հետաքրքրություն առաջացրին, և այժմ տեխնիկումիցի մոտ հարյուր ուսանողներ բնդգրիված են պարագյուտային սպորտի մեջ։

Պարագյուտիստներ պատրաստելու գործը լավ է կազմակերպել վիլնյուսի աերոակումբը։ Այդ աերոակումբի պատրաստած պարագյուտիստների մի մեծ խումբ դիմեց ակումբի զեկավարությանը, խնդրելով շարունակելու իրենց հետ պարապմունքներ՝ լրացնեցին ծրագրով։ Այդ խնդիրը բավարարվեց։ Բացի այդ, աերոակումբն ընդառաջ գնալով արհեստակցական ուսումնարանների սովորողների կամքին, պարագյուտային պատրաստություն ծավալեց նաև նրանց մեջ։

Սուածավոր աերոակումբները մասսայական ավիացիոն աշխատանք ծավալելով, դրանով իսկ շնչ շրջափակվում ակումբի շենքի պատերի մեջ։ Նրանք հասկանում են, որ ավիացիային հասարակական աջակցություն ցուց տալու գործը չի կարող սահմանափակվել աերոակումբների միայն ուսումնա-սպորտային աշխատանքներով։

Սոցիալիզմի երկրում ավիացիայի առաջընթացը կապված է բնակչության ամենալայն խավերի մեջ։ ավիացիոն գիտելիքների իսկական մասսայական տարածման հետ։ Նոր, հետպատերազմյան պայմաններում, ավիացիոն գիտելիքներ տարածելում ԱԱԿԸ աշխատանքը պետք է նշանակալից շափով ընդդայնվի և կրի ավելի նպատակաւաց բնույթ, քան էր Պաջը ավիաքիմի կազմակերպություններում։

Խոշպիսի կազմակերպական սկզբունքներով է կա-

առցված ԱԱԿԸ նոր ընկերությունը և կոնկրետ կերպով  
ինչո՞ւմն է կայանում նրա սկզբնական կազմակերպու-  
թյունների, ակումբների, կայանների և այլն աշխա-  
տանքը:

### ԱԱԿԸ ՍՊՎԵՏԱԿԱՆ ՀՅԱՅՐԵՆԱՍԱԲԵՐՆԵՐԻ ՄԱՍՍՈՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ է

Սպիացիային աջակցող կամավոր ընկերության աշ-  
խատանքն անց է կացվում պարտիական և սովետական  
օրդանների զեկավարությամբ, սերտ կերպով գոր-  
ծակցված կոմիտետական և պրոֆմիութենական կազմա-  
կերպությունների հետ:

Զեռնարկություններում, կոլխոզներում ու սովխոզ-  
ներում, հիմնարկներում և ուսումնական հաստատու-  
թյուններում այժմ ստեղծվում են ԱԱԿԸ սկզբնական  
կազմակերպություններ, շերմորեն քննարկվում են այդ  
կազմակերպությունների աշխատանքային ծրագրերը,  
օրեց-օր աճում է Ընկերության անդամ մտնել ցանկա-  
ցող աշխատավորների դիմումների հոսանքը՝ Այդ րու-  
րը ցույց են տալիս, որ ԱԱԿԸ համապատասխանում է  
ժամանակի հայրենասիրական ձգտումներին՝ անձնա-  
կան մասնակցությամբ օգնել պարտիային և կառավա-  
ռությունն ամրապնդելու ստալինյան ավիացիայի հզո-  
րությունը:

Ընկերության հիմքը, նրա գլխավոր վճռող օլակն,  
սկզբնական կազմակերպությունն է: Այստեղ են ստեղծ-  
վում ավիացիոն խմբակներ: Այստեղ հմուտ մասնա-  
գետները և սպորտամենները, գլխավորապես պատե-  
րազմի Ռազմա-օդային ուժերից զորացրվածները, կարող  
են հաղորդել երիտասարդությանն իրենց գիտելիքներն  
ու փորձը ԱԱԿԸ աերոակումբներն սկզբնական կազ-

մակերպություններից են իրենց համար համալրում քաղելու Սկզբնական կազմակերպություններում են աճեցվում հաստիքական ակտիվի կադրերն, առանց որի անկարելի է կամավոր ընկերության մասսայական ինքնագործ աշխատանքը:

Ավիացիային աջակցող կամավոր ընկերության անդամ կարող է լինել, տասնհինգ տարեկան հասակի հասած Սովորական Միության յուրաքանչյուր քաղաքացի, որն ընդունում է Ընկերության կանոնագրությունը, մտնում է նրա կազմակերպություններից մեկի մեջ և մուծում է անդամավճարները։ Ընդունելությունն՝ Ընկերության անդամության մեջ, կատարվում է անհատական կարգով, սկզբնական կազմակերպության ընդհանուր ժողովի կամ կոմիտեի միջոցով։

Ա.Ա.ԿՌ յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ընտրելու ավիացիոն գիտելիքների կամ ավիացիոն սպորտի իրեն հետաքրքրող ճյուղը, պարագելու Ընկերության աերոակումբում, ուսումնական խմբում, խմբակում, սպորտային օղակում, կամ զոկատում։ Ա.Ա.ԿՌ անդամներն իրավունք ունեն՝ ընտրելու և ընտրվելու Ա.Ա.ԿՌ զեկայար օրդաններն, ակտիվ մասնակցելու Ընկերության կյանքի և պրակտիկ գործունեության բոլոր հարցերը քննարկելիս։ Ա.Ա.ԿՌ անդամներն աշխատանքում և ուսման մեջ լավ ցուցանիշների ու սպորտային հաջողությունների համար արժանանում են Ընկերության մեջ սահմանված խրախուսանքին։

Ա.Ա.ԿՌ անդամները պարտավոր են ենթարկվել Ընկերության մեջ սահմանված կարգին, ակտիվ մասնակցություն ունենալ սկզբնական կազմակերպություններից մեկի աշխատանքին, ուսումնասիրել ավիացիոն գործը,

բնակլությանը բացատրել Ընկերության նպատակներն ու խնդիրները։ Կարգապահությունը խախտողների նը-կատմամբ կիրառվում են հասարակական ներգործության դաստիարակչական միջոցներ։ Ընկերությունից վտարիւը ծայրահեղ միջոց է հանդիսանում և այն պետք է հաստատի ԱԱԿԸ շրջանային (քաղաքային), կոմիտեի կողմից։

«Ավիացիային աջակցով Համամիութենական կամավոր ընկերության (ԱԱԿԸ) սկզբնական կազմակերպությունների կանոնադրությունն» այսպես է բնորոշում նրանց խնդիրները։

ա. Ընկերության մեջ նոր անդամներ ներգրավելը։ Ընկերության անդամների և բնակչության մեջ ավիացիոն գիտելիքներ տարածելը։

բ. Ընկերության անդամներին ավիացիոն մասնակիություններ ուսուցանելը։

գ. ավիացիոն, պլաներային, պարագյուտային և ավիամոդելային սպորտի զարգացումը։

Այդ նպատկի համար ԱԱԿԸ սկզբնական կազմակերպություններն ստեղծում են խմբակներ և կազմակերպում ավիացիոն գործն ուսումնասիրող դասընթացներ, անց են կացնում բազմապիսի ագիտացիոն մասսական աշխատանքների, մասնակցում են աերոակադեմիաների աշխատանքներին, իրենց անդամներին ուղղում են Ընկերության ուսումնական կազմակերպությունները և այլն։

Այդ ամբողջ աշխատանքը կառուցվում է Ընկերության անդամների նախաձեռնության և ինքնազործունեության հիման վրա։ Ընկերության անդամների ուսուցման գործը զեկավարելուն պետք է ներգրավվին Հայրե-

Նական Մեծ պատերազմի մասնակիցները, Օդային նա-  
վատրումի և ավխացիոն արդյունաբերության մասնա-  
գեսները:

ԱԱԿԲ սկզբնական կազմակերպություններ ստեղծ-  
վում են Ընկերության երեք անդամի տոկայության դեպ-  
րում: ԱԱԿԲ այն կոլեկտիվներում, ուր հաշվում են  
հարյուրից պակաս անդամներ, կարող են ստեղծվել խօս-  
քակներ՝ ըստ ցեխերի, բաժինների, կոլխոզի բրիգադ-  
ների, ուսումնական հաստատության կուրսերի ու գա-  
սարանների և այլն: Մեծ կոլեկտիվներում, ուր հաշվում  
են Ընկերության ավելի քան 100 անդամ, կարող են:  
ստեղծվել ցեխային և նրանց համապատասխան կող-  
մակերպություններ, որոնց ղեկավարում է տվյալ ձեռ-  
նարկության կամ հիմնարկության կոմիտեն:

Սկզբնական կազմակերպություններն ընտրում են  
իրենց կոմիտեները և վերստուգիչ հանձնաժողովները՝  
մեկ տարի ժամանակով: Ստորին կոլեկտիվներում, ուր  
Ընկերության 15 անդամից պակաս են, ընտրվում է  
միայն նախագահ, իսկ խմբակներում՝ խմբկազմակեր-  
պիչներ: Ղեկավար օրգանների ընտրությունը կատար-  
վում է ժողովներում (կոնֆերանսներում) փակ (գաղտ-  
նի) քվեարկությամբ: Յուրաքանչյուր սկզբնական կազ-  
մակերպության բարձրագույն օրգանն՝ ընդհանուր ժո-  
ղովն է (կոնֆերենցիան): Ժողովն օրինական է համար-  
վում այն ղեպքում, եթե նրան ներկա են ոչ պակաս,  
քան Ընկերության անդամների կեսը: ԱԱԿԲ տարեկան  
անդամավճարի գումարն՝ երեք ոուրլի է, իսկ միջնա-  
կարգ դպրոցների, արհեստակցական և երկաթուղարքին  
ուսումնարանների ու ֆաբրիկուլատի սովորողների հա-  
մար՝ մեկ ոուրլի: Մուտքի վճարը բոլորի համար՝ մելի

ոռպլի էր Գանձված անդամավճարների գումարի երեսուն տոկոսը և մուտքի վճարն ամբողջությամբ, նույնպես և այն միջոցներն, որոնք գոյանում են այլ հանուրդներից, զնում են սկզբնական կազմակերպությունների ուստամնական և մասսայական աշխատանքների կարիքների համար:



ԱԱԿԸ մեջ մտնում են տարրեր հասակների ու պըրոֆեսիաների տասնյակ հազարավոր մարդիկ: Ոմանք կամենում են մասնակցել Ընկերության մասսայական-ազիտացիոն աշխատանքին և միշտ տեղյակ լինել ավիացիայի բնափակառում վերջին գիտա-տեխնիկական նվաճումներին: Ուրիշներին, առավելապես երիտասարդությանն, ԱԱԿԸ մեջ է քաշում ավիացիոն մասնագիտություններ ստանալու ձգտումն, որպեսզի նախապատրաստեն իրենց՝ Ռազմա-օդային ուժերի գորամասերում պատվավոր ծառայության համար: Երրորդները, պիտակապես զորացրված զինվորները, կամենում են ԱԱԿԸ-ում կատարելագործել իրենց գիտելիքներն ու ունակություններն ավիացիոն սպորտի այս կամ այն բռնագավառում:

ԱԱԿԸ մեջ մտնող սովետական քաղաքանցուն շվեյարող բավարարել այդ Ընկերության՝ լոկ ձևական անդամությունը: Նա կամենում է, որ Ընկերության սկզբնական կազմակերպությունը բավարարի իր հետաքըրքրությունն ավիացիոն գիտելիքների և ավիացիոն սպորտի նկատմամբ: Ընկերության սկզբնական կոլեկտիվը՝ կազմակերպական ձևավորման օրը պետք է դառնա նաև նրա գործնական աշխատանքի ծավալման առաջին օրը:

ԱԱԿԲ յուրաքանչյուր սկզբնական կազմակերպության համար այժմ գործունեության լայն ասպարեզ է բացվում: Դասախոսությունները, զրույցներն, էքսկուրսիաները, դիտողական ազիտացիան, կինոն, ռադիոն, մամուլն, ազիտացիոն միջոցների ամբողջ անսպառելի զինանոցը, կարող է, և պետք է օգտագործվի ԱԱԿԲ կողմից՝ ավիացիոն-տեխնիկական գիտելիքների մասսայական տարածման և Ընկերության աշխատանքի ժողովրդականացման համար: Գրեթե յուրաքանչյուր կազմակերպաթյուն պրոպագանդիստական աշխատանքավալելու հնարավորություններ ունի: Ծագմա-օդային ռամերից զորացրված զինվորների մեջ քիչ մարդիկ չկան, որոնք ընդունակ են դառնալու ավիացիոն գիտելիքները մասսաներին հասցնելու ակտիվ հաջորդիչներ: ԱԱԿԲ յուրաքանչյուր անդամ, որը տիրապետում է որևէ մասսապիտության, պարտավոր է լինել ավիացիոն գիտելիքների պրոպագանդիստ, բնակչությանը բացատրել Ընկերության նպատակներն ու խնդիրները:

Մասսայական պրոպագանդիստական աշխատանք կազմակերպելիս ԱԱԿԲ կոմիտեները պետք է հիշեն, որ այդ աշխատանքում ամենապլիսավորը նրա գաղափարական բարձր մակարդակն է: Գաղափարական և նպատակալաց պրոպագանդան պետք է համոզիլ և ակնառու կերպով, հասանելի և սկարզ ցույց տա այն գործերի օգտակարությունն ու անհրաժեշտությունն, որոնցով դրավճում է ԱԱԿԲ: Աշխատանքի մասշտարը, հասկանի է, որ որոշվում է Հենց իր՝ կազմակերպության մասշտարով:

Բավական ուսանելի է ԱԱԿԲ մոսկովյան կազմակերպության անցկացրած մասսայական պրոպագանդու-

շի փոքրծը: ԱԱԿԲ զեկավարները մայրաքաղաքային կիւնութարտոններից մեկի դիրեկցիայի հետ միասին անց կացրին ավիացիոն ֆիլմերի միամսյակ: Հանդիսատեսների համար կազմակերպված էր հատուկ ցուցահանդեն, որն արտացոլում էր Մոսկվայի՝ ԱԱԿԲ և նրա աերոակումբի խավագույն կոլեկտիվների աշխատանքը: Այդ ցուցահանդենի էքսպոնատների ժամ ժամանակավոր մոտ 220.000 մարդ: Ընդհաջումների ժամանակակի և մինչև սեանսներն զկսելը հանդիսատեսները հանդիպում են զրոյցներ էին ունենում հերոս-օդաշուների և ԱԱԿԲ ակտիվիտեների հետ: Դպրոցականները կարող էին այդտեղ տեսնել զանազան տիպերի մոդելներ և զրոյց ունենալ սրանց կոնստրուկտորների, համաշխարհային ռեկորդներ՝ Մալիկի, Լյուբուշկինի, Սոկոլովի և արիշների շնոր:

Այդ ցուցահանդենի մասին հաճախորդների հիադմունքով լի կարծիքներն, այն հետաքրքրությունն, որ նրանք արտահայտեցին ԱԱԿԲ աշխատանքի նկատմամբ, լավագույն արտացոլցն է այն բանի, թե որքան մեծ է այդպիսի պրոպագանդիստական աշխատանքի նշանակությունը: ԱԱԿԲ յուրաքանչյուր կազմակերպություն, թեկուղ փոքր մասշտարով, կարող է, և պետք է անցկացնի այդպիսի աշխատանք, օգտագործելով արձիութենական ակումբները, կուլտուրայի տներն ու պալատներն՝ աշխատավորության հետ օդաշվության գործի վարպետների հանդիպումներ կազմակերպելու համար, դաստիառություններ և զրոյցներ անցկացնելու համար, ավիացիայի անկյուններ, ցուցահանդեններ ստեղծելու համար: և այլն:

Հենինգրադի աերոակումբի շվուտները, պարագաւ-

տիստները, պլաներիստներն, ավեամողելիստները հետաքրքիր հավաք անցկացրին Կարմիր Գյուղի ռազմագաղտում, որտեղից աշխարհում առաջին օդաչու Գոլուրել դեպի երկինք տարավ Մոժայսկու՝ աշխարհում առաջին ինքնաթիւոք:

Ապագա օդաչուների հավաքին եկան լենինգրադան շատ կոմերիտականներ, պիոներներ, շրջակա գյուղերի բնակիչներ: Յուրաքանչյուրը ցանկանում էր մանրամասնորեն իմանալ աշխարհում առաջին ինքնաթիւոյ գյուտարարի կյանքի ու ստեղծագործական աշխատանքի մասին: Կարմիր Գյուղի հնաբնակ Պյուտր Վասիլևի նաումովը սկատմեց շվուտներին, թե ինչպես էր անցնուած Գոլուրեկի առաջին թոփշն, որին նա ականատես էր: Աերուակումբի հրամանատարներն ելույթ ունեցան ուսանանարեղ կոնսարտմետոր Մոժայսկու և նրա գյուտի մասին հետաքրքիր հաղորդմամբ, ունկնդիրներին ծանոթացրին Մոժայսկու գյուտի առթիվ մամուլի առաջին հաղորդագրությունների հետ, որոնք հրապարակվել էին ավելի քան 72 տարի առաջ՝ 1877 թվի հոմվարին, ոկրոնշտագսկի Վեստնիկում: Այդ՝ երիտասարդ շվեաների և Հին օդաչուների համար անմոռանալի հավարում, նրա մասնակիցներն երդվեցին նվիրաբերել իրենց ընդուռ ուժերն ստալինյան ավիացիայի հետագա աճմանն ու ամրապնդմանն, ամեն կերպ օգնել ԱԱԿԾ նրա կարեւոր և օգտակար աշխատանքում:

Մեր Հայրենիքի ավիացիոն նվաճումների լայն պըրոպագանդան, ավիացիոն-տեխնիկական գիտելիքների ամենօրյա և նպատակասլաց պրոպագանդան՝ մասսա-

Ների մեջ, այն հիմքն է Հանդիսանում, որի հիման վրա  
ծավալվելու է ԱԱԿԸ ստորին կողեկտիվների ամբողջ  
պրակտիկ գործունեությունը:

Ավիացիոն բոլոր մասնագիտություններից երիտա-  
սարդության մեջ ամենամեծ ժողովրդականությամբ օգ-  
տըլում է օդաչուի մասնագիտությունը: Այդ բացատըր-  
վում է ի միջի այլոց նաև նրանով, որ ոչ բոլոր՝ իրենց  
ավիացիային նվիրաբերել ցանկացողները զիտեն, որ  
օդային նավատորմում քիչ շեն այնպիսի մասնագի-  
տություններն, որոնք ո՛չ պակաս հետաքրքիր, ո՛չ պա-  
կաս բարդ, և ո՛չ պակաս օգտակար ու կարևոր են  
երկրի համար, քան օդաչուի մասնագիտությունը: Ա-  
վիացիայում առհասարակ ոչ կարևոր մասնագիտու-  
թյուններ շկան: Ժամանակակից ինքնաթիւը մեծ պա-  
հանջներ է ներկայացնում ամբողջ անձնակազմի տեխ-  
նիկական պատրաստականության նկատմամբ:

Ընկերության շատ կոլեկտիվներ սեփական ուժերով  
կարող են կազմակերպել ավիամասնագետների պատ-  
րաստում: Անհրաժեշտ է ԱԱԿԸ անդամներին բացա-  
տրել, որ, եթե նրանք ցանկանում են ձեռք բերել՝ տեխ-  
նիկի, մեխանիկի, վարպետի և այլ ավիացիոն մասնա-  
գիտություն, կարող են այն սկսել թեորետիկական ու-  
սուցումից, որպեսզի հետո պատրաստիկան անցնեն տե-  
խնակումբում կամ նրա ինքնաթիւուային կայաններում:

Լավ աշխատող աերոակումբները, լավ պատրաստ-  
ված հարյուրավոր օդային սպորտսմենները, գեռնա շեն  
որոշում ԱԱԿԸ հաջողությունը: Խնդիրը նրանումն է, որ  
ավիացիոն կուլտուրային հաղորդակից լինեն և ուսու-  
ցանեն ավիացիոն գիտելիքների մինիմումն՝ աշխատա-  
գորների լայն մասսներն, որոնք հենց այդ նպատա-

կով էլ մտնում են ԱԱԿԸ շարքերը։ Ահա՝ թե ինչո՞ւ Ընկերությանը հարկավոր է իր կազմակերպությունների ամենալայն և ճյուղավորմած սխտեմ, ամուր, կարգապահ և աշխատունակ ստորին կոլեկտիվներ՝ քաղաքում և գյուղում։

Ընկերությունն ունի բոլոր պայմաններն, որպեսզի արդեն այժմ ընդլայնի աերոակումբների, պլաներային և պարաշյուտային կայանների, ավիացիոն կարինետների, պարաշյուտային աշտարակների և այլնի ցանցը։ Բայց սխալ կլիներ ենթադրել, թե ուսումնական կենտրոնները բոլոր անհրաժեշտ պիտույքներով լրիվ սարքավորելու գեպքում միայն կարելի է ծավալել ավիացիոն գործը։ Կոպիտ սխալ կլիներ կողմնորոշվել ԱԱԿԸ սկզբնական կոլեկտիվներ ստեղծելու միայն այն տեղերում, որ կան պատրաստի նյութա-տեխնիկական բազա և հմուտ մասնագետների կազմեր։

Սովետական Միությունում չկան այնպիսի տեղեր, ուր ԱԱԿԸ շկարողանա աշխատավորների մեջ անցկացնել իր գործը։ Միայն անհրաժեշտ է յուրաքանչյուր գեպքում ելնել կոնկրետ պայմաններից և մասսայական աշխատանքի համար օգտագործել բոլոր հնարավորությունները։ Նույնիսկ ԱԱԿԸ գյուղական ամենափոքրաթիվ կազմակերպել ավիատորի զրույցը կոլխոզնիկների հետ ստալինյան ավիացիայի մասին, հավաքել ավիացիայի վերաբերյալ հարցերով զրականություն, լույս ընծայել Ընկերության գործունեությանը նվիրված պատի թերթ, սարքավորել ԱԱԿԸ անկյուն կամ ոչ մեծ ցուցահանդես։

Բանակից՝ Կուրսկու մարզի, Վոլովսկու շրջանի «Քսկրա» կոլխոզ վերադարձավ ավիացիոն նախկին մե-

խանիկ ընկ. Սելիշլել: Նու մի քանի զբուցներ անց-  
կացը ավիացիայի նշանակության, ԱԱԿԸ խնդիրների-  
մտախն: Շատ կոլխոզնիկներ, մանավանդ երիտասար-  
գությունը, մտան Ընկերության անդամության մեջ:  
Ստեղծվեց կոլխոզի սկզբնական կազմակերպություն:  
Այնուհետև ընկ. Սելիշլել կատվեց մարզային աերոա-  
կոմբի հետ և երաշխավորվեց նրա օգնությամբ: Ա-  
կումբը պարտավորվեց, թեորետիկական ուսուցումն-  
որ անց է կացվում Սելիշլելի կողմից, ավարտելուն պես,  
կոլխոզ սովարկել մի ինքնաթիռ և հրաքանգչին:

ԱԱԿԸ սպիտատորներ, նրա խնդիրների պրոպա-  
դանդիստներ պետք է դառնան մեր քաղաքացիական օ-  
դային նավատորմի և բենուային ավիացիայի օդաշու-  
ներն ու մյուս մասնավեճները: Նրանք լինում են երկրի-  
ամենահեռավոր շրջաններում, հանդիպում են շատ  
մարդկանց հետ: Նրանք կարող են, և պետք է մեծ օդ-  
ություն ցույց տան ԱԱԿԸ տեղական կազմակերպու-  
թյուններին՝ ավիացիոն գիտելիքներ պրոպագանդիու-  
դորժում:

Մեր երկրի քաղաքներում, ուր կան ավիացիոն  
գործարաններ, ինստիտուտներ, օդանավակայաններ,  
ուր կա անհրաժեշտ նյութական բազա և ավիացիոն  
դորձի դաստառների ու պրոպագանդիստների բավարար-  
քանակություն, ԱԱԿԸ կազմակերպությունները բոլոր  
հնարավորություններն ունեն իրենց աշխատանքների ա-  
մենալայն ծավալման համար:

ԱԱԿԸ այդպիսի կազմակերպություններում անմի-  
շապես պետք է ստեղծվեն՝ պլաներիզմի, պարագյու-  
տիզմի, ավիամոդելիզմի, թեթևամոտոր ավիացիաի-  
սեկցիաներ, ավիացիոն գիտելիքների պրոպագանդայի-

անկցիաներու Այդ սեկցիաները պետք է համախմբեն ԱԱԿԲ ակտիվը, և որքան ավելի լավ լինի կազմակերպված նրանց աշխատանքն, այնքան լիարյում և բեղմնավոր կլինի Ընկերության ամբողջ գործունեությունը:

Նոր Ընկերությունում մեծ և արդյունավետ աշխատանքի լայն ասպարեզ կդառնեն սովորական ավիացիայի ինժեներա-տեխնիկական և գիտական կադրերը Նրանք կարող են օգնել ԱԱԿԲ կարճ ժամկետում ստեղծելու նյութա-տեխնիկական բազա: Ընկերությունը կարիք ունի մեծ և լավ սարքավորված թեթևամուրային սպարկի, որը մի կողմից հնարավորություն կտա լայնորեն անցկացնել մասսայական ավիացիոն-սպորտային մրցություններ՝ մեր երկրում, մյուս կողմից, ամեն կերպ կնպաստի նոր ավիացիոն սեկորդների հաստատմանն, որոնք էլ ավելի կիառարաններ՝ մեր հայրենական Օդային նավատորմը:

Այս խնդիրների լույսի տակ անշափորեն աճում է ԱԱԿԲ աերոակումբների գերը: Նրանք պարտավոր են պատրաստել ոչ միայն օդաչուներ, այլ և ուրիշ ավիամասնագետներ՝ տեխնիկներ, մոտորիստներ, ուաղիստներ, սպառազինության, պրիբորների, ռադիոլոկացիայի և այլ վարպետներ: Միևնույն ժամանակ ավիոակումբները կոչված են բավարարելու Ռազմա-օդային ուժերից զրացրված զինվորների պահանջներն ու հարցումներն, այն զինվորների, որոնք ձգտում են կատարելագործել իրենց կվալիֆիկացիան, բարձրացնել բանակում ստացած իրենց պրոֆեսիոնալ գիտելիքները: Աերոակումբներում պետք է դաստիարակվեն օդային այնպիսի սպորտամեններ, որոնք ընդունակ լինեն հանդես գալու պատասխանատու մրցություններում: Այդ աշխա-

տանքի նշանակությունն այժմ առավել ևս աճում է օդաշուշտարակարգականների համար նորմատիվների հաստատման և «Ապորտի վարպետի» կողման սահմանելու կտակակցությամբ:

Տուշինոյի օդային տոներին մոսկացիներն ամենատարի տեսնում են աերոակումբային սպորտամենների հիմանալի տեխնիկան, որտեղ հրամանատարն է Մոսկացին Գեղարվեստական թատրոնի նախկին գրիմարար, Զկալովի անվան Կենտրոնական աերոակումբի սան Վասիլի Պովլովը: Նրա սպորտային ջոկատում կատարելագործում են իրենց օդաչվական հմտությունն՝ ուսանող Վիկտոր Լիսինը, շոփեր՝ Գեորգի Օզնիվյանը, բանվոր Վիկտոր Գենինը և ուրիշներ:

Սովետական աերոակումբներն ինքնապարփակ ուսումնական և սպորտային զգրոցներ շեն ընտրյալների համար, ինչպիսին են ավիացիոն ակումբները կապիտալիստական երկրներում: Սովետական աերոակումբներն՝ Ընկերության բոլոր անդամների, բոլոր աշխատավորների համար մատչելի մասսայական ուսումնասպորտային աշխատանքի կենտրոններ են: Ինքն, մեր աերոակումբների բնույթն այնպիսին է, որ նրանց ամբողջ գործունեությունը պետք է հենվի մեր հայտարակայնության լայնորեն աջակցության վրա:

ԱԱԿԸ աերոակումբները պետք է իրենց շրջապատեն մշտական ակտիվով՝ զորացրված օդաչումներից, շտուրմաններից, մեխանիկներից, ավտոտեխնիկներից, ավիացիոն կոնստրուկտորներից և սպորտամեններից:

Իրենց ռազմա-սպորտային աշխատանքում ԱԱԿԸ սկզբնական կազմակերպություններն ու ակումբները պետք է դնենակարգին Համեր (բ) կա՝ երկրում մասսայա-

կան ֆիզկուլտ շարժման զարգացման և սովետական սպորտամենների հմտության բարձրացման մասին որոշմամբ:

Ֆիզիկական կուլտուրան վիտելով՝ որպես աշխատավորների կոմունիստական դաստիարակության կարևոր միջոցներից մեկը, նրանց առողջությունը բարելավելու և սովետական ժողովրդին աշխատանքի և սոցիալիստական Հայրենիքի պաշտպանությանը նախապատրաստելու համար, Համեր (թ)Պ ԿԿ գտնում է, որ ֆիզկուլտուրային աշխատանքի բնագավառում զլիավոր խնդիրներ հանդիսանում են՝ մասսայական ֆիզկուլտշարժման ծավալումն երկրում, սպորտային հմտության մակարդակի բարձրացումը և այդ հիման վրա մոտակա տարիներին սովետական սպորտամենների կողմից սպորտի կարևորագույն տեսակներից համաշխարհային տուազնություն նվաճելը:

## ՄՏԵՌ, ԱԱԿԸ ՄԵԶ: ԱՄՐԱՅՐԵՌ, ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԵՐԿՐՈՒ ԱՎԻԱՑԻՈՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1898 թվին Կիևում կայանում էր բնախույզների բժիշկների համագումարը, որում ելույթ էր ունենում մեր Հայրենիքի հիմանալի հայրենասերը, մի մարդ, որին կենինն անվանել էր «ռուսական ավիացիայի հայր»:

Խնչպե՞ս հմայված, պատզամավորները լսում էին պրոֆեսոր Նիկոլայ Եղորովիչ Ժուկովսկուն: Նա կիսում էր նրանց հետ իր երազանքն, որին վիճակված էր շուտով իրականություն դառնաղու Ժուկովսկին այն ժամանակ տում էր.

«Նայելով մեր շուրջը թռչող կենդանի էակներին՝

շրածիծեռներին և ծիծեռնակներին, որոնք իրենց էներ-  
գիայի աննշան պաշարով մի քանի ժամ շարունակ սլա-  
նում են օդում՝ մեկ վարելյանում 50 մետրի հասնող  
արագությամբ և կարող են հաղթահարել ամբողջ ծո-  
վեր, արծիվներին ու բազեներին, որոնք կապույտ եր-  
կընքում իրենց գեղեցիկ շրջաններն են գծում տարա-  
ծած անշարժ թերությ, անճոռնի շղչիկին, որը քամուց  
շնչվելով, անաղմում սլանում է բոլոր հնարավոր ուղ-  
ղություններով, մենք ակամայից հարցադրվում ենք.  
Ճիթի մեղ համար հնարավորություն շկա նմանվելու  
այդ էակներին, ճիշտ է, մարզը շունի թեր և նրա  
մարմնի քաշը մկանների քաշի հարաբերությամբ 72 ան-  
գամ թույլ է թոշունից. ճիշտ է նա դրեթե 800 անգամ  
ծանր է օդից, մինչդեռ թոշունն օդից ծանր է միայն 200  
անգամ։ Բայց ես կարծում եմ, որ նա կթոշի հենվելով  
ոչ թե իր մկանների ուժի վրա, այլ իր բանականության  
ուժի վրա։

...Մերենան, որն ավելի ծանր է, քան օդը, իմ կար-  
ծիքով մեղ միշոց կտա մեկ կամ երկու մարդու՝ ցանկա-  
ցած ուղղությամբ արագ թոխչի համար և կհարկադրի  
մեղ թողնել թոշունին նախանձելը։

Այդ իմաստում խոսքերն արտասանվել էին կես գար  
տուազ Նրանք լրիվ իրականացան։

Հելիկոպտերը մարդուն հնարավորություն է տալիս  
կանգ առնելու օդային տարածության ցանկացած կե-  
տում։ Ռեակտիվային ինքնաթիռները սլանում են դրեթե  
նույնպիսի արագությամբ, ինչպիսի արագությամբ տա-  
րածվում է ձայնը։ Հրաշա՞լի թեր են ստեղծել սովե-  
տական մարդիկ։ Մեծ և հրապուրիչ հեռանկարներ են

բացվում մեր առաջ ավիացիոն շինարարության խաղաղ տարիներին:

Մեր Հայրենական Օդային Նավատորմի օրորանի մոտ կանգնած էր Մեծ Ստալինը: Ենորհիվ նրա Հայրական հոգատարույշանը և սիրալիր ուշաղրությանը մեր երկիրը դարձել է մեծ, հզոր ավիացիոն տերություն: Սովետական ժողովուրդը մեր ավիացիան անվանում է՝ ստալինյան, իսկ խիզախ, քաջարի և Հայրենիքին նվիրված օդաշուներին՝ ստալինյան բազեներ:

ՍՍՌՄ Օդային Նավատորմն ամրապնդվում և զարդանում է օրեցօր: Նա հենվում է Սովետական Միության սոցիալիստական հզոր էկոնոմիկայի վրա, ժաղովրդի պահպանության վրա: Սովետական ավիատորների լավագույն բարեկամ և ռատուցիչ ընկեր Ստալինն աճեցնում և դաստիարակում է մեր ավիացիան: Ավիացիան՝ մեր ժողովրդի սիրելի զավակն է:

Սովետական Հայրենասերներն, որոնք միավորվել են մասսայական՝ Ավիացիային աջակցող կամավոր ընկերության մեջ, բիենց առաջ դրնլ են փառավոր և ազնիվ խնդիր՝ ամրապնդել սոցիալիզմի երկրի ավիացիոն հզորությունը:

Յուրաքանչյուրն, ով երիտասարդ է, ցանկանում է տիրապետել ավիացիոն գիտելիքների, դառնալ շտուման, մեխանիկ, կամ ավիացիոն այլ մասնագետ, ուղեսգի լրացնի ստալինյան բազեների փառավոր շատերը,— մտե՛մ, ԱԱԿԸ մեջ, զեացե՛մ, սովորելու նույնակներում, վարժախմբերում, զեացե՛մ, աերոակումբները:

Երե դուք արդեն ունեք ավիացիոն մասնագիտություն, բայց ձգտում եք այն կատարելազործել, զանալ

խիզախս օդային սպորտամեն և ձեր, փորձը հաղորդել  
ավիացիայի Երիտասարդ բարեկամներին, — մտե՛ք.  
Ա.Ա.ԿԸ մեջ. եղե՛ք, նրա աերոակրումքների, պարաշյու-  
ռային և պլաներային կայանների ակտիվ անդամը:

Եթե դուք ուզում եք ձեր անձնական մասնակցու-  
թյամբ օգնել պետուրյանն, աշխատավորների լայն-  
մասսաների մեջ ավիացիոն գիտելիքներ պրապահենդե-  
լում, — մտե՛ք, Ա.Ա.ԿԸ մեջ, ակտիվ մասնակցեցե՛ք, նրա  
սկզբնական կազմակերպությունների աշխատանքներին:

Ընդարձակ և բազմազան է Ավիացիային աջակցող  
կամավոր բնկերության հայրենասիրական գործունեու-  
թյունը: Կա, թե ուր ժամանել նրա անդամների նախա-  
ձեռնությունը: Կա, թե ուր ներդնել մեր հայրենական Յ-  
դային նախատորմի բոլոր բարեկամներին՝ իրենց էներ-  
գիան:

Յուրաքանչյուր բաղադրում ու ավանում, կոլխոզամ,  
սովխոզում և ՄՏԿ, յուրաքանչյուր դպրոցում և ուսում-  
նական հաստատությունում, ստեղծե՛նք, Ավիացիային  
աջակցող կամավայր բնկերության գործուն, համախմբ-  
ված և կարգապահ սկզբնական կազմակերպություն-  
ներ:

Ամրացրե՛ք, սոցիալիզմի Երկրի՝ մեծ Սովետական  
աերոպրյան, ավիացիոն նպարությունը:

Մտե՛ք, Ա.Ա.ԿԸ մեջ:



Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Բ Ի Տ Յ Ա Ւ Ն

	էջ
1. Առվետական Միություններ՝ ավիացիոն մեծ աերությունների է	3
2. Հայրենիքի թեսքը	21
3. Դեպի ավիացիա տանող ուղին	39
4. ԱԱԿԸ՝ սովետական հայրենակրների մասաւայական կազմակերպությունների է	50
5. Մտե՛ք, ԱԱԿԸ մեջ, Ամբողջական աշխատավորման հրաժարական ավելացնելու հայությունը	83

Թարգմանիչ՝ Հ. ԽԱՉԻՏՅԱՆ  
Թարգմ. խմբագիր՝ Գ. ԴԱՎԻԴՅԱՆ  
Տեխն. խմբագիր՝ Վ. ԴԱՎԻԹՅԱՆ

ՎՃ 04812

Պատվեր № 888

Ժիւած 5000

---

Հանձնված է արտադրության 18/XI 1949 թ.  
Ստորագրված է առաջարկության 16/XI 1949 թ.  
Տպագրական 41/4 մամուլ:

---

Հայոց իշխանության վարչության № 2 տպարան,  
Կնունյացն այս փողոց վրա հայտ է թուալ և պատճենահանություն կատարելու համար:

ՆԿԱԼՏՎԱ ԱՆ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԼՇ	ՏԱՐ	ՏԱՐԺԱՅ Է	ՊԵՏ Է ԽԵցի
2	7 ն	բռնված	բռնկված
12	10 դ	արտաքոբշ	բոխւ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035280

Թարգմանիչ՝ Հ. ԽԱՉԻՆՅԱՆ  
Թարգմ. խմբագիր՝ Գ. ԳԱԼՅՈՒՄՅԱՆ  
Տեխն. խմբագիր՝ Վ.

Վ. 04517

Պատովելը Ա:

Հանձնված է արտադրության 18/XI 1949 թ.  
Ստորագրված է առաջարկության 18/XI 1949 թ.  
Տպագրական 41/3 մամուլ:

Հայասլիքը բաֆհբասի վարչության Ա 2 առաջարկան,  
Կնունյանցի փող. Ն 86, Երևան, 1949 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035280

ԳՐԱԴԱՐԱՆ

104.

